

ՏԱՐԵԳԻՐՔ

2015

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Արարատյան Հայրապետական թեմը կազմավորվել է 4-րդ դարի սկզբին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը ձևավորեց Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական կառույցները:
449թ. տեղի ունեցած Արտաշատի հայտնի ժողովում կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցին (441-451թթ.) Եղիշեի կողմից անվանվում է «Եպիսկոպոս Այրարատի»: Այս կարգը պահպանվել է դարերի ընթացքում: Արարատյան թեմն այսօր էլ կրում է «Հայրապետական» անվանումը և, կաթողիկոսական թեմ լինելով, անմիջականորեն կառավարվում է առաջնորդական փոխանորդի կողմից, ում նշանակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Ներկայումս Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: 2015 թվականի դրությամբ թեմի տարածքում գործում է 33 եկեղեցի, 10 մատուռ, 35 ծուխ: Երևանում գործում է 16 եկեղեցի, 8 մատուռ: Հոգևոր ծառայություն է մատուցում 31 քահանա: Արարատի մարզում գործում է 17 եկեղեցի, 2 մատուռ: Մարզում հոգևոր ծառայություն է մատուցում 16 քահանա: Ընդհանուր առմամբ թեմում հոգևոր ծառայություն է մատուցում 48 հոգևորական՝ ներառյալ առաջնորդական փոխանորդը :
2015թ.-ին Արարատյան Հայրապետական թեմում կատարվել է

- 2975 պսակ
- 10466 մկրտություն

Լինելով ազգային՝ Հայ Եկեղեցին և ի մասնավորի՝ Արարատյան Հայրապետական թեմը կարևորում է ազգային գիտակցության և ավանդույթների զարթոնքն ու նորովի մատուցումը: Հովվական խնամքի, հոգևոր քարոզչության, սոցիալական ու կրթական առաքելությունն արդյունավետ և համակարգված իրականացնելու համար թեմում ձևավորվել են մի շարք կառույցներ՝

1. Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
2. Ցերեկային կենտրոն
3. Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
4. Խուլերի համայնք
5. Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ
6. Ծնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
7. Տեղեկատվական բաժին՝ էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, qahana.am կայքով ու սոցիալական ցանցերում գործող էջերով, «Շողակն Արարատյան» և «Մանանա» ռադիոհաղորդումներով
8. «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթ
9. Գրադարան
10. Երիտասարդաց միություններ
11. Տիկնանց միություններ
12. Կիրակնօրյա դպրոցներ
13. «Շողակաթ» հոգևոր գրախանութ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԸ

ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Պետրոս ավագ քին. Մալյան (հոգևոր հովիվ)
Տ. Շահե քին. Հայրապետյան
Տ. Անուշավան քին. Կոշեցյան
Տ. Եսայի քին. Արթենյան

ՍՈՒՐԲ ՁՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Գրիգոր քին. Գրիգորյան (հոգևոր հովիվ)
Տ. Հայկազուն քին. Մկրտչյան
Տ. Վահան քին. Առաքելյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Զգոն քին. Աբրահամյան (համատեղությամբ՝ հոգևոր հովիվ)
Տ. Պարթև քին. Մուրադյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Նորագավիթ)

Տ. Վարդան քին. Գափոյան (հոգևոր հովիվ)
Տ. Մյուռոն ավագ քին. Ադամյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Մալաթիա)

Տ. Տիրան ավագ քին. Առուշանյան (հոգևոր հովիվ)
Տ. Գաբրիել քին. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նորք-Մարաշ)

Տ. Զաքարիա քին. Ավետիսյան (հոգևոր հովիվ)
Տ. Դանիել քին. Բաղումյան
Տ. Թովմա քին. Անդրեասյան

ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Ավետիս ավագ քին. Դանիելյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Քանաքեռ)

Տ. Սերովբե ավագ քին. Պետրոսյան (հոգևոր հովիվ)
Տ. Բարսեղ ավագ քին. Ղազարյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորք)

Տ. Նորայր ավագ քին. Բաղդասարյան (հոգևոր հովիվ)
Տ. Վարդան ավագ քին. Մկրտչյան
Տ. Կարապետ քին. Կարապետյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Դավթաշեն)

Տ. Խորեն քին. Մարուքյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ (Ներքին Չարբախ)

Տ. Մկրտիչ ավագ քին. Թովմասյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ (ՀԱԹ)

Տ. Զենոն քին. Բարսեղյան (հոգևոր հովիվ)
Տ. Կորյուն ավագ քին. Մարտիրոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Ավան)

Տ. Հարություն քին. Ավագյան (հոգևոր հովիվ)

ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔ

Տ. Բաբկեն քին. Հայրապետյան (հոգևոր հովիվ)

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Տ. Զգոն քին. Աբրահամյան (հոգևոր հովիվ)

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Նուբարաշեն)

Տ. Նիկողոս քին. Հովհաննիսյան (հոգևոր հովիվ)

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Եռաբլուր)

Տ. Տիրայր ավագ քին. Սահրադյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորքի 1-ին զ.)

Տ. Նշան քին. Ալավերդյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Մրգավան)

Տ. Դավիթ քին. Կյուրեղյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ (Բյուրական)

Տ. Ղազար քին. Պետրոսյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Արարատ)

Տ. Դավիթ քին. Սահակյան (հոգևոր հովիվ)
Տ. Եզնիկ քին. Մալխասյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ (Արգավանդ)

Տ. Գրիգոր քին. Հովհաննիսյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Վերին Արտաշատ)

Տ. Մխիթար քին. Ալոյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ (Ներքին Դվին)

Տ. Երվանդ քին. Բաբայան (հոգևոր հովիվ)
Տ. Շմավոն քին. Ղևոնդյան (այցելու հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Վեդի)

Տ. Հովակիմ քին. Հարությունյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Մարմարաշեն)

Տ. Թաթուլ քին. Գասպարյան (հոգևոր հովիվ)
Տ. Շմավոն քին. Ղևոնդյան (այցելու հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Դալար)

Տ. Եփրեմ քին. Հարությունյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
(Արևշատ)

Տ. Արարատ քհն. Օրդոյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
(Կանաչուտ)

Տ. Նիկողոս քհն. Հովհաննիսյան (համատեղությամբ՝ հոգևոր հովիվ)
Տ. Թադեոս քհն. Թադևոսյանց (այցելու հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
(Շահումյան)

Տ. Դերենիկ քհն. Միքայելյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
(Մասիս)

Տ. Աշոտ քհն. Սաֆարյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ
(Մխչյան)

Տ. Միքայել քհն. Նուրիջանյան (հոգևոր հովիվ)

ԱՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
(Նորաբաց)

Տ. Մարտիրոս ավագ քհն. Ավետիսյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ
(Արտաշատ)

Տ. Թաթուլ քհն. Գասպարյան (համատեղությամբ՝ հոգևոր հովիվ)
Տ. Երվանդ քհն. Բաբայան (համատեղությամբ՝ հոգևոր սպասավոր)

ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ
(Մասիս)

Տ. Արարատ քհն. Օրդոյան (համատեղությամբ՝ հոգևոր հովիվ)

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Արարատյան Հայարապետական թեմի բոլոր եկեղեցիներն առաջնորդվում են ծխական համայնքի ձևավորման հստակ առաքելությամբ, որը հովվական գործունեության հիմնական նպատակներից է: Որևէ քաղաքում, գյուղում կամ վարչական շրջանում գործող եկեղեցու համայնքը տվյալ բնակավայրի բնակիչներն են, ովքեր, անկախ իրենց կրոնական ընկալումներից, ավանդաբար համարվում են տվյալ եկեղեցու համայնքի անդամ: Համայնքի անդամներից հավաքագրվում է եկեղեցու ծուխը: Ծխական համայնքի կազմակերպումը հոգևոր հովվի առաջնորդությամբ՝ տվյալ եկեղեցու հավատացյալների հոգևոր միությունն է, որը հաստատվում է սիրով և ծառայելու պատրաստակամությամբ: Ծխական համայնքներում գործող հիմնական կառույցներն են՝

- Ծխական խորհուրդը, որը համայնքի գործադիր վարչական մարմինն է՝ հոգևոր հովվի նախագահությամբ, որի նպատակն է աջակցել եկեղեցու հոգևորականներին՝ հովվական գործունեության մեջ և օժանդակել եկեղեցու համայնքի ձևավորմանն ու ծխի կայացմանը: Ծխական խորհուրդն ընտրվում է ծխի անդամներից

- Տիկնանց միությունը, որն իր անփոխարինելի տեղն ունի եկեղեցական-համայնքային կյանքում: Մայրական հոգատարությամբ տիկնանց միության ներկայացուցիչները մասնակցում են եկեղեցու սոցիալական ծրագրերին՝ կազմակերպում բարեգործական միջոցառումներ, այցելություններ ծերանոց, մանկատուն, համայնքի միայնակ ծերերին: Եկեղեցին մեծ ընտանիք է, որտեղ մոր առաքելությունը վստահված է Տիկնանց միության անդամներին

- Երիտասարդաց միությունը, որի առաքելությունն է կրթել երիտասարդներին՝ համախմբելով նրանց ազգային ու հոգևոր արժեքների շուրջ: Այն հատուկ կարևորվում է նաև երիտասարդների շնորհների բացահայտումն ու ինքնահաստատումը հասարակական կյանքում

- Կիրակնօրյա դպրոցը, որի առաքելությունն է դաստիարակել քրիստոնեական բարձր նկարագիր ունեցող սերունդ: Քանի որ երեխաների ազգային-եկեղեցական կրթությունը մեր ինքնության, ազգային ու հոգևոր արժեքների զորացման գրավականն է:

Ծխական համայնքում գործող այս կառույցները եկեղեցու հովանու ներքո իրականացնում են նաև տարաբնույթ միջոցառումներ՝ բարեգործական ծրագրերից սկսած մինչև կրթական, ուսուցողական նախագծեր: Հարկ է նշել, որ ծխական համայնքի ներկայացուցիչներն իրենց գործունեությունը ծավալում են բացառապես կամավոր սկզբունքով: Սա ծառայություն է, որն իրականանում է նվիրյալների ջանքերի, չհուսահատվելու կարողության, մեծ եռանդի ու չմարող հավատի շնորհիվ:

ԽՈՒԼԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Աշխարհում ապրում է 70.000.000 խուլ, նրանք ունեն իրենց պատմությունը, մշակույթն ու լեզուն: Խուլ մարդկանց 80%-ն ապրում է զարգացած երկրներում: Աշխարհում հազարից մեկն ունի լսողության խանգարում: Հայաստանում ապրում է 3500 խուլ:

Խուլերը սոցիալ-մշակութային փոքրամասնություն են: Նրանք ունեն ժեստալեզվային մտածողություն և «լսում են աչքերով»: Լսող մարդիկ տեսածը վերածում են բառերի, կամ կարդալիս բառերը վերածում պատկերների, իսկ խուլերը տեսածը վերածում են շարժումների, ժեստերի: 2002թ.-ից Արարատյան Հայարապետական թեմում Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ և աջակցությամբ գործում է խուլերի համայնքը: Համայնքի հոգևոր հովիվը Տ. Եսայի քհն. Արթենյանն է:

2015թ. խուլերի համար

- Ժեստերի լեզվով թարգմանվել են
  - Ս. Պատարագները
  - Ժամերգությունները
  - Աստվածաշնչի սերտողություններ-ը
  - Հոգևոր քարոզները
- Կազմակերպվել է խուլերի միջազգային օրվան նվիրված միջոցառում
- Իրականացվել է Ս. Գրքի ժեստերի լեզ-վով թարգմանության նկարահանումներ
- Կազմակերպվել են երկլեզու դասընթացներ
- Կազմակերպվել է անգլերեն ժեստերի լեզվի ուսուցում
- Հիմնվել է մնջախաղի թատրոն
- Իրականացվել են մասնագիտական կրթության դասընթացներ՝
  - վարսահարդարում
  - դիմահարդարում
  - խոհարարություն
  - ֆուրշետ

ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Սիրիայում ընթացող պատերազմի պատճառով 2012թ.-ից բազում հայ ընտանիքներ ներգաղթեցին Հայաստան: Նույն թվականին, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ, Տեր Գրիգոր քահանա Գրիգորյանը նշանակվեց թեմի տարածքում հանգրվանած սիրիահայ համայնքի հոգևոր հովիվ և «Արագ արձագանքում սիրիահայ ընտանիքներին» ծրագրի պատասխանատու: Տվյալ ծրագրի նախաձեռնությամբ ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամը՝ «Եկեղեցիների համատեղ գործողություն» այլանսի ֆինանսավորմամբ՝ մոտ հազար սիրիահայ ընտանիքի տրամադրեց սննդի, հիգիենայի փաթեթներ և անկողնու պարագաներ:

Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու համայնքում ընդգրկված են բազմաթիվ սիրիահայեր, ովքեր մասնակցում են ժամերգություններին և Սուրբ Պատարագներին:

- 2015թ. փետրվարից սկսած եկեղեցու սիրիահայ համայնքի համար ամեն ուրբաթ կազմակերպվում է արևմտահայերենով քարոզխոսություն
- Որպես համայնքի անդամներ սիրիահայերն ակտիվ մասնակցել են
    - Եկեղեցական ծեսերին և արարողություններին
    - Եկեղեցական և ազգային տոներին
    - Ուխտագնացություններին (Ս. Սաղմոսավանք, Ս. Հովհաննավանք, Մուղնու Ս. Գևորգ,Կարմրավոր Ս. Աստվածածին, Ս. Մարիանե, Ս. Գեղարդավանք, Աբովյան քաղաքի Ս. Հովհաննես եկեղեցի և այլն)
    - Համայնքային ծրագրերին
- Դեկտեմբերի 25-ին ԱՀԹ առաջնորդարանի դահլիճում 20 սիրիահայ ընտանիքների հանձնվեցին քսան հազար դրամ արժեքով կտրոններ: Օգնությունն իրականացվեց ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամի զարգացման ծրագրի շրջանակում:

ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՆՈՂ ՏԱՐՈՒՄ

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ և ՕԾՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

2015թ. Արարատյան Հայրապետական թեմում ավարտվեց չորս եկեղեցիների շինարարությունը, որոնք օծվեցին և իրենց դռները բացեցին հավատացյալների առաջ:

ա) Երևանի Նուբարաշեն համայնքի Սրբոց Նահատակաց եկեղեցի

2015թ. ապրիլի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծեռամբ տեղի ունեցավ Երևանի Նուբարաշեն համայնքի Սրբոց Նահատակաց նորակառույց եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցու շինարարությունն սկսվել էր 2012 թվականին: Եկեղեցու բարերարն է Գագիկ Ծառուկյանը, նախագծի հեղինակը ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանն է:

բ) Երևանի Ս. Աննա եկեղեցի

2015թ. ապրիլի 30-ին հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ու տիկին Ռիտա Սարգսյանի տեղի ունեցավ Երևանի Ս. Աննա նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը:

Եկեղեցին կառուցվել է բարերարությամբ Հրայր և Աննա Հովնանյանների:

Ս. Աննա եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր 2011 թվականին:

Նախագծի հեղինակն է ճարտարապետ Վահագն Մովսիսյանը:

գ) Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցի

2015թ. մայիսի 31-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյա-

նի, կատարվեց Արտաշատ քաղաքի Ս. Հովհաննես Ավետարանիչ նորակառույց եկեղեցու օծման արարողությունը:
Ս. Հովհաննես եկեղեցին, որի հիմնարկեքը կատարվել էր 2002թ. հոկտեմբերի 29-ին, կառուցվել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի բարերարությամբ: Նախագծի հեղինակներն են ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանը և ճարտարապետ Էմմա Ֆահրադյանը:
Գնահատելով եկեղեցու բարերար Հովիկ Աբրահամյանի եկեղեցանվեր նպաստը՝ ի շինություն և ի պայծառություն հոգևոր-եկեղեցական կյանքի, Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերջինիս շնորհեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան:

դ) Արարատի մարզի Մասիս քաղաքի Ս. Թադեոս եկեղեցի

2015թ. հոկտեմբերի 4-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, կատարվեց Մասիս քաղաքի նորակառույց Ս. Թադեոս եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր 1991թ., կառուցվել է Վարդանյան ընտանիքի բարերարությամբ: Նախագծի հեղինակներն են Արթուր և Անահիտ Թարխանյանները:Գնահատելով եկեղեցու բարերար Վարդանյան ընտանիքի եկեղեցանվեր նպաստը՝ ի շինություն և ի պայծառություն հոգևոր-եկեղեցական կյանքի, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան շնորհեց Միքայել և Կարեն Վարդանյաններին:



Եկեղեցաշինությունը շարունակվում է նաև թեմի այլ համայնքներում: Անհատ բարերարների նվիրատվությունների շնորհիվ եկեղեցիներ են կառուցվում հետևյալ համայնքներում՝

1. **Երևանի Էրեբունի համայնք**
2. **Երևանի Արաբկիր համայնք**
3. **Արարատի մարզի Արարատ քաղաք**
4. **Արարատի մարզի Դաշտավան համայնք**
5. **Արարատի մարզի Ոսկետափ համայնք**
6. **Արարատի մարզի Արաքսավան համայնք:**

«ԱՊԱՇԽԱՐԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՎ». ԵՐԲ ՀԱՄԱՅՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՔԻՆ Է

2015թ. Արարատյան Հայրապետական թեմում սկսվեցին նոր եկեղեցիների կառուցման և վերականգման աշխատանքները: Հնարավոր չէ եկեղեցիներ կառուցել՝ միայն անհատների աջակցությամբ: Կարևոր է նաև համայնքի, հավատացյալների մասնակցությունը եկեղեցաշինության գործում՝ համախմբելով բոլոր ջանքերն ու միջոցները: Սեփական համայնքում գործող եկեղեցի ունենալու կարիքն էլ չորս տարի առաջ հիմք դարձավ **«Ապաշխարենք կառուցելով»** եկեղեցաշինական ծրագրի: Այս ծրագրի շրջանակում, թեմում հավատացյալների հանգանակության միջոցով, կառուցման ընթացքի մեջ են Արարատի մարզի Հովտաշեն, Ձրաշեն, Բարձրաշեն, Նշավան, իսկ վերանորոգման փուլում՝ Ոստան համայնքների եկեղեցիները:

«Ապաշխարենք կառուցելով» ծրագրին աջակցելու, վերոնշյալ եկեղեցիների կառուցման համար դրամական հանգանակություն կազմակերպելու և ծրագրի ընթացքը հանրությանը ներկայացնելու համար 2015թ.-ին ստեղծվեց www.ekexeci.am կայքը: Կայքի շնորհանդեսը տեղի ունեցավ նոյեմբերի 12-ին՝ ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Ծրագրին առավել աջակցություն ցուցաբերած ութ անձանց Սրբազան հայրը շնորհեց Օրհնության գրեր:

ՀՈԳԵՎՈՐ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ավանդական հոգևոր քարոզչությունն այն ամուր հիմքն է, որի վրա Հայ Առաքելական եկեղեցին դարեր շարունակ իր գործունեությունն է ծավալում: Այն իր մեջ ներառում է հոգևոր հանդիպումներն ու զրույցները, ամենատարբեր միջոցառումների անցկացումը, ուխտագնացությունները, ճամբարները, եկեղեցական տոների հանրայնացումը, որոնք մարդու մեջ արթնացնում են իսկական քրիստոնյային՝ պատրաստ սիրելու և Աստծո մարտիկը լինելու:

2015թ. ընթացքում Արարատյան Հայրապետական թեմի եկեղեցիներում իրականացվել է 3200 հոգևոր հանդիպում և սերտողություն, որին մասնակցել է շուրջ 96.000 մարդ:
Հոգևոր քարոզչությունը չի սահմանափակվել միայն եկեղեցիներում իրականացվող հոգևոր

հանդիպումներով. թեմի տարածքում գտնվող ուսումնական, մշակութային և այլ հասարակական կենտրոններում նույնպես իրականացվել են հոգևոր զրույցներ ու հանդիպումներ: Պարբերաբար հոգևոր քարոզչություն է իրականացվել հետևյալ հաստատություններում՝

1. ՀՕՖ երեխաների աջակցության կենտրոն
2. Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ
3. Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն
4. Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն
5. Երևանի Ն. Տիգրանյանի անվ. տեսողական խանգարումներ ունեցող երեխաների թիվ14 հատուկ կրթահամալիր
6. Զեյթունի խնամքի տուն
7. Հաշմանդամ երեխաների «Տաթև» առողջակրթական ցերեկային կենտրոն
8. «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն
9. «Խարբերդի հատուկ մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ
10. Հաշմանդամ երեխաների Ավանի ցերեկային կենտրոն
11. Երևանի խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն
12. Նորքի թիվ 17 հատուկ դպրոց
13. Երևանի թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ

14. Նոր Նորքի հատուկ գիշերօթիկ դպրոց
15. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր
16. «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Մասիսի ցերեկային կենտրոն
17. ՀՀ Ոստիկանության կրթահամալիր
18. Համայնքների հանրակրթական դպրոցներ և մանկապարտեզներ
19. Բարձրագույն ուսումնական հաստատություններ:

ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Քրիստոնյաների հոգևոր կյանքի անբաժան մաս են կազմում եկեղեցական տոները, որոնցում արտահայտվում է նրանց հավատը, աստվածաճանաչողությունը և աստվածապաշտությունը: Յուրաքանչյուր տոն ունի իր խորհուրդը, իմաստն ու նշանակությունը, պատգամը և ավանդությունը: 2015թ. թեմի հոգևոր քարոզչության առանցքային առաքելություններից է եղել ինչպես եկեղեցական տոների հոգևոր խորհրդի, այնպես էլ դրանց հետ կապված ազգային ավանդույթների մատուցումը և ժողովրդի ակտիվ ներգրավվածությունն այդ տոներին: Արարատյան Հայարապետական թեմի բոլոր համայնքներում եկեղեցական տոներն ազգային ավանդույթներով իրականացման արդյունքում հավատացյալներն իրենք են մասնակից դառնում տոների կազմակերպմանն ու անցկացմանը:

Ս. ԾՆՈՒՆԴ

Սուրբ Ծննդյան տոնին ԱՀԹ բոլոր եկեղեցիներում տոնական Ս. Պատարագից բացի կազմակերպվեցին՝

- ամանորյա միջոցառումներ համայնքի երեխաների համար
- համերգներ
- ցուցահանդեսներ
- միջդպրոցական մրցույթներ:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Արարատյան Հայարապետական թեմում Բուն Բարեկենդանը նշվեց մեծ շուքով և բազմամարդ տոնախմբությամբ.

- Կազմակերպվեց շքերթ՝ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց դեպի Կասկադ համալիր՝ազգային դիմակներով, խաղերով, երգուպարով
  Մասնակցում էին՝
  - Երևանի վարչական շրջանների մշակութային խմբեր
  - ազգագրական երգուպարի խմբեր
  - հասարակական կազմակերպություններ
  - հայորդաց տան համախմբեր
  - հեքիաթի հերոսներ:
- Կասկադ համալիրում կազմակերպվեց միջոցառում՝ ազգային երգ ու պարով, թատերական ներկայացումներով, խաղերով, մրցույթներով ու մրցանակներով
- Մատուցվեց տոնին բնորոշ ժողովրդական ուտեստներ
- Կազմակերպվեց ցուցահանդես Երևանի բուհերի ուսանողների մասնակցությամբ, ովքեր մասնակցել էին Ս. Սարգիս զորավարի տոնի առթիվ կազմակերպված «Սիրո ուժն է անհաղթ» ցուցահանդես- մրցույթին:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Հայ Առաքելական եկեղեցին փետրվարի 14-ին մեծ հանդիսավորությամբ նշում է Տեառնընդառաջի տոնը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ տոնը հռչակվել է նորապսակների օրհնության օր:

- Տոնի նախորդ օրը՝ փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո, Արարատյան Հայրապետական թեմի եկեղեցիներում կազմակերպվեցին ազգային տոնախմբություններ, վառվեցին խարույկներ
- Փետրվարի 14-ին ԱՀԹ բոլոր եկեղեցիներում մատուցվեց տոնական Ս. Պատարագ, հավարտ որի կատարվեց նորապսակների օրհնության կարգ:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Ծաղկազարդը հռչակվել է որպես մանուկների օրհնության օր: Ծաղկազարդի տոնին թեմի բոլոր եկեղեցիներում կատարվեց մանուկների օրհնության կարգ: Համայնքի և կիրակնօրյա դպրոցի երեխաների համար կազմակերպվեցին տոնական միջոցառումներ՝ հեքիաթի հերոսների մասնակցությամբ:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. ապրիլի 5-ին Հայ եկեղեցին նշեց Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնը:

- Թեմի բոլոր եկեղեցիներում մատուցվեց տոնական Ս. Պատարագ
- Սուրբ Հարության Ճրագալույցին, հավարտ Ս. Պատարագի թեմի երիտասարդներն իրականացրեցին կանթեղներով երթ՝ «Հարության ավետիս» խորագրով: Այն մեկնարկեց առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց: Մասնակիցները Մ. Մաշտոցի պողոտայով և Ամիրյան փողոցով հոգևոր երգերի կատարումներով քայլեցին դեպի Հանրապետության հրապարակ, որտեղ քարե գորգի վրա ծաղկյալ խաչ կազմեցին և ընդհանրական աղոթք առաքեցին առ Աստված
- Ս. Հարության տոնին, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու բակում հավարտ Ս. Պատարագի տեղի ունեցավ տոնական միջոցառում՝ «Վարք հայոց» ազգագրական երգի-պարի խմբի մասնակցությամբ
- Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու բակում կազմակերպվեց միջոցառում Երևանի Կենտրոն վարչական շրջանի պատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոնի և Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի պարային խմբերի մասնակցությամբ
- Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու բակում հավարտ Ս. Պատարագի կատարվեց Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի 300 կուրսանտների օրհնության կարգ
- Ավանի Ս. Աստվածածին եկեղեցու բակում Ավան վարչական շրջանի աջակցությամբ եկեղեցու հավատացյալների համար իրականացվեց զատկական հյուրասիրություն և տոնական համերգ՝ համայնքի երգի-պարի խմբերի մասնակցությամբ
- Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցու բակում Շենգավիթ վարչական շրջանի և եկեղեցու աջակցությամբ իրականացվեց զատկական հյուրասիրություն: Համայնքի մշակույթի տան մշակութային խմբերի մասնակցությամբ տեղի ունացավ տոնական համերգ
- Վեդու Ս. Աստվածածին եկեղեցում իրականացվեց տոնական միջոցառում Վեդու մշակույթի տան խմբերի մասնակցությամբ:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆ ԿԱՄ ՎԱՐԴԱՎԱՌ

- Տոնի առթիվ Ս. Պատարագ մատուցվեց բոլոր եկեղեցիներում
- Պայծառակերպության տոնին, Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց միությունները «Ոստան» ազգագրական երգի-պարի համույթի հետ «Միասի՞ն տոնենք ազգային տոները» խորագրի ներքո կազմակերպել էին Վարդավառի տոնախմբություն Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու բակում:

ԽԱՉՎԵՐԱՑ

- Տոնի առթիվ Ս. Պատարագ մատուցվեց բոլոր եկեղեցիներում
- Խաչվերացի նախօրեին՝ սեպտեմբերի 12-ին՝ ԱՀԹ երիտասարդաց միությունները Երևանի Տիգրան Մեծ պողոտայի կանգառներում իրականացրեցին «Խաչի քարոզ» ծրագիրը
- Էրեբունի համայնքի կիսակառույց եկեղեցու բակում հոգևոր հովիվ Տ. Զգոն քահանա Աբրահամյանն անցկացրեց բաց դաս Խաչվերացի տոնի մասին: Այնուհետև կիսակառույց եկեղեցուն կից գործող «Մաշտոց» դպրոցի օտար լեզուների խմբակների սաները ներկայացրեցին տոնական միջոցառում
- Արարատի Ս. Հակոբ եկեղեցու համայնքը կազմակերպեց խաչերթ՝ ի նշան Տիրոջ խաչափայտի վերադարձի
- Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցում իրականացվեց խաչապտույտ եկեղեցու հարակից փողոցներով, այնուհետև տիկնանց միությունը ներկայացրեց «Երջանկության գաղտնիքը» խորագրով միջոցառումը
- Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու բակում կազմակերպվեց տոնախմբություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ Նոր Նորքի Հայորդյաց տան մշակութային խմբերի, «Արմեններ» դիոլահարների համույթի, ինչպես նաև Գևորգ Գինոսյանի անվան կրկեսային դպրոցի սաների մասնակցությամբ: Միջոցառման ավարտին հավատացյալները մասնակցեցին Խաչի թափորին
- Նուբարաշենի Ս. Նահատակաց եկեղեցու բակում իրականացվեց համերգային ծրագիր Նուբարաշեն վարչական շրջանի Մշակույթի տան և մանկապարտեզի սաների մասնակցությամբ
- Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում կազմակերպվեց տոնական միջոցառում
- Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու համայնքն իրականացրեց խաչերթ: Հավարտ Ս. Պատարագի եկեղեցու բակում մատուցվեց սիրո ճաշ և կազմակերպվեց տոնական միջոցառում: Իրականացվեց տոնական բացիկների մրցույթ համայնքի, երիտասարդաց միության, եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցի և Մարի Իզմիրլյանի անվան մանկատան սաների համար
- Վեդու Ս. Աստվածածին եկեղեցու բակում կազմակերպվեց խաչի թափոր, որից հետո տոնական համերգ՝ համայնքի մշակութային խմբերի մասնակցությամբ
- Մխչյանի Ս. Հովհաննես եկեղեցու բակում կազմակերպվեց սիրո ճաշ, որից հետո՝ տոնական միջոցառում:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ

- Թարգմանչաց տոնի առթիվ ԱՀԹ երիտասարդաց միություններն առաջնորդարանի դահլիճում կազմակերպեցին զրույց-դասախոսություն հայոց գրերի կարևորության ու արժեքի մասին: Բանախոսներն էին ԱՀԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը և ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ գեներալ-մայոր Վարդան Ավետիսյանը:

3. Այցելություն Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոց, որտեղ Ս. Սարգսին նվիրված ներկայացմամբ հանդես եկավ Հովհ. Թումանյանի անվ. թանգարանի «Ռոտոնդա» թատերախումբը

4. Միջոցառում «Հալեպ» հայրենակցական բարեսիրական և Համաշխարհային հայկական երիտասարդական «Ոստայն» հասարակական կազմակերպությունների համար

5. Բացօթյա մեծ համերգ Կարապի լճի տարածքում

6. Մայր Աթոռ Ս. Էջմիածնից առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի բերվեց Ս. Սարգիս զորավարի մասունքակիր աջը

7. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի բերվեց 17-րդ դարի Ավետիս երեցի կողմից Ս. Սարգիս եկեղեցում ընդօրինակված Ավետարանը

8. Միջոցառում Արգավանդի Ս.Սարգիս եկեղեցու բակում երիտասարդաց միության կողմից, Ս. Սարգսին նվիրված մաղթանք-բացիկների մրցույթ, քաղցրաբլիթների բաժանում

9. Խաչերթ

   - Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց՝ Մ. Մաշտոց և Մ. Բաղրամյան պողոտաներով դեպի Պողոսյան այգիներ
   - Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցուց ՀԱԹ վարչական շրջանի Ս. Երրորդություն եկեղեցի
   - Նոր Նորքի թաղապետարանից դեպի Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցի

10. Տոնական մեծ համերգ Պողոսյան այգիներում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Արարատյան Հայրապետական թեմում հոգևոր քարոզչությանը զուգահեռ իրականացվում են ամենատարբեր միջոցառումներ՝ այդպիսով, մշտապես ամուր կապ պահելով մեր հանրության բոլոր շերտերի ներկայացուցիչների հետ: Թեմում բազմաբնույթ միջոցառումների իրականացումն օրեցօր մեծացնում է երեխաների, երիտասարդների և մեծահասակների մասնակցությունը եկեղեցական կյանքին՝ նրանց մասնակից դարձնելով եկեղեցու մշակութածին և ավանդույթներ ձևավորող առաքելությանը:

1. Աշակերտների օրհնության կարգ

2015թ. սեպտեմբերի 1-ին

- Բոլոր եկեղեցիներում կատարվեց աշակերտների օրհնության կարգ
- Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականներն այցելեցին հանրակրթական դպրոցներ՝ աշակերտներին ու աշխատակազմին փոխանցելով իրենց հայրական օրհնությունն ու շնորհավորանքը գիտելիքի օրվա կապակցությամբ
- Երևան քաղաքի մի շարք դպրոցներում Հայ Եկեղեցու պատմության առաջին դասն անցկացրեցին թեմի քահանաները

Ս. Սարգիսն իր որդի Մարտիրոսի և 14 քաջ մարտիկների հետ նահատակվելով հանուն քրիստոնեական հավատքի՝ հետագայում դարձել է Հայ Առաքելական եկեղեցու ամենասիրելի սրբերից մեկը: Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ Ս. Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր:

Արարատյան Հայրապետական թեմում Սուրբ Սարգսի տոնը նշվում է ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլև ժողովրդական սովորույթներով, որը մեզանում դարձել է նվիրական ավանդույթ: Դեռ տարիներ առաջ Ս. Սարգսի տոնն իսկապես տոն դարձնելու համար անհրաժեշտ էր իրականացնել համընդհանուր նախաձեռնություններ, լայնածավալ տոնակատարություններ: 2006թ.-ից առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ սկիզբ դրվեց Ս. Սարգսի տոնի շրջանակներում կազմակերպվող տոնակատարություններին և միջոցառումներին: Անցնող տասը տարիների ընթացքում զորամասերում, հիվանդանոցներում, կրթօջախներում, բացօթյա մարդաշատ վայրերում և համերգասրահներում կազմակերպվեցին տոնն ազդարարող ուրախ տոնակատարություններ, համերգներ, խաչերթեր, սիրո պատմությունների մրցույթներ, հայոց բանակին ուղղված բարեգործական ծրագրեր՝ մեծ ժողովրդականություն բերելով տոնին:

2015թ. Ս. Սարգսի տոնի շրջանակում կազմակերպվեց՝

1. Ցուցահանդես
   - Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում
   - Գեղագիտության ազգային կենտրոնում
   - Հայկական պետական մանկավարժական համալսարանում
   - Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայում
2. Այցելություն զորամասեր, զինվորական հոսպիտալ, Ա. Խամփերյանցի անվան ռազմաօդային ինստիտուտ, որտեղ կատարվեց օրհնության կարգ

2. Ինտելեկտուալ փառատոն

Ինտելեկտուալ խաղերի անցկացումն Արարատյան Հայրապետական թեմի եկեղեցիներում բարի ավանդույթ է դարձել. այն իրականացվում է ավելի քան 8 տարի: Հոգևոր թեմաների շուրջ կազմված հարցերը նպաստում են երիտասարդների հոգևոր գիտելիքների աճին, իսկ խաղի մրցութային բնույթը զարգացնում է առողջ մրցակցության մշակույթը: Ինտելեկտուալ խաղերի մասնակիցների ոգևորությունն ու խանդավառությունն ապացույցն է այն բանի, որ այսօր եկեղեցի հաճախող երիտասարդն ամուր է ոչ միայն իր հավատի, այլ նաև՝ եկեղեցագիտության մեջ: Ինտելեկտուալ խաղերն ավանդաբար իրականացվում են Ս. Երրորդություն եկեղեցում՝ տարեկան չորս անգամ: Հատկանշական է նաև այն փաստը, որ ինտելեկտուալ խաղերն անցկացվում են ոչ միայն եկեղեցու ներսում, այլև հանրակրթական դպրոցներում՝ նպաստելով հոգևոր կրթության զորացմանը:

3. «Նամակ զինվորին» ծրագիր

«Նամակ զինվորին» նախաձեռնությունն իրականացվեց Ս. Սարգիս զորավարի տոնի առթիվ, «Մենք մեր զինվորի կողքին ենք» ծրագրի շրջանակում: ԱՀԹ երիտասարդները մանկատների և գիշերօթիկ դպրոցների սաներից հավաքեցին քաջալերող նամակներ և դրանք փոխանցեցին հայոց բանակում ծառայող զինվորներին:

4. Հաղթանակի աղոթք ազատագրված Շուշիում

2015թ. Շուշիի ազատագրման տարեդարձի առթիվ թեմի երիտասարդներն ուխտի մեկնեցին Արցախ.

- Համերգային ծրագրով այցելեցին ԼՂՀ ՊԲ զորամասեր: Ելույթ ունեցան ԱՀԹ «Ծաղկազարդ», «Արարատ» երգչախմբերը և «Վարք հայոց» ավանդական երգի-պարի խումբը
- Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարթև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գլխավորությամբ Շուշիի Ս. Ղազանչեցոց եկեղեցում երիտասարդները «Հաղթանակի աղոթք» վեր առաքեցին՝ գոհություն մատուցելով Աստծուն Արցախյան ազատամարտում ունեցած հաղթանակի համար
- Երիտասարդաց միության անդամներն Արցախի ՊԲ զինվորներին փոխանցեցին «Նամակ զինվորին» ծրագրի շրջանակում գրված քաջալերող նամակները:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

2014թ. սկսած Արարատյան Հայրապետական թեմում առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս ԿՃոյանի օրհնությամբ իրականացվեցին բազմաթիվ միջոցառումներ, համերգներ, ցուցահանդեսներ, խաչերթեր, այցելություններ, ուխտագնացություններ, օծվեցին և օրհնվեցին խաչքարեր, որոնց նպատակն էր ոգեկոչել Հայոց Ցեղասպանության նահատակների հիշատակը: ԱՀԹ քահանաները, թեմական միջոցառումներից զատ, այցելեցին ավելի քան 100 դպրոց, տասնյակ մանկապարտեզներ, ուսումնական և մշակութային կենտրոններ՝իրենց հայրական օրհնությունը բերելով միջոցառումների կազմակերպիչներին ու մասնակիցներին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները շարունակվեցին նաև 2015թ.-ին:

ա. Համերգներ և միջոցառումներ

1. Համերգ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝ նվիրված եղեռնազոհ մայրերին ԱՀԹ «Ծաղկազարդ» համախմբի մասնակցությամբ (07.04.2015թ.)
2. Միջոցառում ԱՀԹ խուլերի համայնքի և երիտասարդաց միության մասնակցությամբ «Ի խորոց սրտի» խորագրով
3. Գալահամերգ «Իզաբել» շնորհալիների կենտրոնի մասնակցությամբ (21.05.2015թ.)
4. Համերգ ԱՀԹ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու «Մանկունք» մանկական երգչախմբի մասնակցությամբ (30.06.2015թ.)
5. Գրական-երաժշտական կոմ-

պոզիցիա «Կոմիտասը մանուկների շուրթերով»՝ ԱՀԹ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու «Զորավոր մանկունք» երկսեռ երգչախմբի մասնակցությամբ (01.11.2015թ.)

6. Համերգ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը՝ ԱՀԹ «Արարատ» համախմբի մասնակցությամբ (04.12.2015 թ.)

7. Ցերեկույթ՝ Աջափնյակի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում (12.03.2015թ.)

8. Ցերեկույթ՝ Արարատի մարզի Մխչյան գյուղի դպրոցում (08.05.2015թ.)

9. Ցերեկույթ՝ Էրեբունու մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում (15.03.2015թ.)

10. Ցերեկույթ՝ Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցում (19.06.2015թ.)

11. «Մենք մեր ազգի ապագան ենք» խորագրով ցերեկույթ՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի դահլիճում (26.06.2015թ.)

12. Համերգ ԱՀԹ «Զանգակներ» համույթի մասնակցությամբ՝ Խոր Վիրապ վանական համալիրում (19.03.2015թ.):

բ. Կազմակերպվեց «Զորս» անունը կրող ցեղասպանության պահանջատիրական հոլովակների ցուցադրություն և նախագծի ներկայացում (24.02.2015թ.):

գ. Ցուցահանդեսներ

1. «Մշակութային ցեղասպանություն» խորագրով՝ լուսանկարների ցուցադրություն և բանախոսություն (24.01.2015թ.)

2. «Արարատյան ներաշխարհ» խորագրով կանոնիկ և ոչ կանոնիկ սրբապատկերների, աբստրակտ աշխատանքների ու բատիկայի ցուցահանդես (24.10.2015թ.)

3. Նուբարաշեն վարչական շրջանի 175 և 95 դպրոցների աշակերտների նկարների ցուցադրություն (22.11.2015թ.) :

դ. Խաչերթեր

1. Խաչերթ Վերին Արտաշատում (15.04.2015թ.)
2. Խաչերթ Մխչյանում (23.04.2015թ.)
3. Խաչերթ Վեդի քաղաքում (23.04.2015թ.)

ե. Բանախոսություն՝«Ցեղասպանության հոգեբանական հետևանքները, ժխտման քաղաքական դրդապատճառներն ու պատմական կեղծարարությունները» թեմաների շուրջ (24.03.2015թ.)

զ. Հոգեհանգիստ մուսալեռցիներին օգնության հասած ֆրանսիացի ծովակալ Լուի Դարտիժ դը Ֆուրնեի հիշատակին (22.02.2015թ.)

է. Ինտելեկտուալ խաղ (24.02.2015թ.)

ը. Ուխտագնացություն Իսպանիայի Կոմպոստելա քաղաքի Սանտյագո տաճար (06.05.15- 16.05.15)

թ. Օծվեցին և օրհնվեցին խաչքարեր և հուշարձաններ, որոնք տեղադրվեցին՝

1. Մասիսի Ս. Գևորգ եկեղեցու բակում
2. Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու բակում
3. Վանաշենի համայնքապետարանի դիմաց

4. Երևանի Աջափնյակ վարչական շրջանում
5. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի բակում
6. Այգեպատ համայնքում՝ համայնքապետարանի առջև
7. Նորք Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցու բակում
8. Նոր Կյուրին համայնքի կենտրոնում
9. Արարատի Ս. Հակոբ եկեղեցու բակում
10. Արալեզ համայնքում
11. ՀՀ Ոստիկանական Ակադեմիայի բակում
12. Մասիսի շրջանի Ղուկասավան համայնքում:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուխտագնացությունը մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր քրիստոնյայի հոգևոր կյանքում: Այն յուրահատուկ հոգևոր փորձառություն է, որը հարստացնում է մարդու ներաշխարհը, նոր ուժ հաղորդում նրա հավատին, նոր խթան դառնում ապրելու, արարելու ու աստվածահաճո կյանքով ապրելու համար: Յուրաքանչյուր ուխտագնացություն Աստծո հետ հանդիպելու հնարավորություն է:
Հայաստանի ողջ տարածքով սփռված եկեղեցիները մեր երկրի զարդերն են, հոգեղենության կենդանի վկաները: Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականներն ու համայնքների անդամները 2015թ. ընթացքում կազմակերպել են ուխտագնացություններ դեպի Հայաստանի, Արցախի, Իրանի, Իսրայելի, Պաղեստինի, Իսպանիայի զորավոր ու հոյակերտ եկեղեցիներ:

- Դեպի Հայաստանի սրբավայրերը կազմակերպվել է՝ թվով 259 ուխտագնացություն: Մասնակցել է 8570 հավատացյալ
- Դեպի Ատրպատական՝ 1 ուխտագնացություն

- Դեպի Երուսաղեմ՝ 5 ուխտագնացություն
- Դեպի Իսպանիա՝ 1 ուխտագնացություն:

ՀՈԳԵՎՈՐ ՃԱՄԲԱՐՆԵՐԸ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Քրիստոնեական դաստիարակության մեջ իրենց անփոխարինելի տեղն ունեն հոգևոր ճամբարները: Դրանք հարստացնում են մասնակից երեխաների և երիտասարդների հոգևոր գիտելիքները, խթանում են նրանց՝ ավելին իմանալու ցանկությանը, սերմանում են քրիստոնեական արժեքներ:

2015թ. ամռանն Արարատյան Հայրապետական թեմի մի շարք համայնքներում նախաձեռնվել և կազմակերպվել են բակային ճամբարներ՝ մեկ շաբաթից մինչև երեք ամիս տևողությամբ:

Ա. Բակային ճամբարներ են կազմակերպվել՝

1. Արաբկիր համայնքում
2. Դավիթաշեն համայնքում
3. Մարմարաշեն համայնքում
4. Մխչյան համայնքում
5. Բյուրավան համայնքում
6. Նշավան համայնքում
7. Զրաշեն համայնքում
8. Հովտաշեն համայնքում
9. Բարձրաշեն համայնքում
10. Զովաշեն համայնքում

11. Արևշատ համայնքում

12. Արգավանդ համայնքում

13. Նուբարաշեն համայնքում

Բակային ճամբարներին մասնակցեց շուրջ 2230 երեխա:

Բ. Հուլիսի 20-31-ը Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու համայնքը Մ. Իզմիրլյանի անվան մանկատան երեխաների և համայնքի անապահով ընտանիքների թվով 53 երեխաների համար Սևանի ափին անցկացրեց տասնօրյա ճամբար:

Ճամբարի կազմակերպմանը մասնակցեցին համայնքի և երիտասարդաց միության անդամներն, Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցի սաները, Սյունիքի թեմի Տաթև համայնքի պատանիները, Կանադայի թեմի 14 երիտասարդներ

Գ. Հոգևոր ճամբարներ կազմակերպվեցին նաև հաշմանդամների համար.

• Ազգային Առաջնորդության Ինստիտուտի և ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համատեղ ֆինանսավորմամբ օգոստոսի 25-30-ը Ծաղկաձորում հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց համար անցկացվեց «Մարտահրավեր» անունը կրող հոգևոր ճամբարը: Ճամբարային առօրյայում ներառված էին հոգևոր և սոցիալական թեմաներով զրույց-քննարկումներ, սպորտային և ինտելեկտուալ խաղեր, ֆիզիոթերապևտի ծառայություններ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ՝ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը հոգևոր քարոզչության մեջ դարձել է հովվական կյանքի անբաժանելի մասը, որն իր մեջ ներառում է համացանցն ու սոցիալական կայքերը: Վերջիններիս միջոցով եկեղեցին քարոզչական աշխատանքներ է իրականացնում՝ ամրագրելով իր կայուն տեղը հայ քրիստոնյայի հոգևոր կյանքում:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժինը ձևավորվել է 2014թ. օգոստոսի 1-ից՝ միավորելով ԱՀԹ մամլո դիվանն ու էլեկտրոնային քարոզչության բաժինը: Այն իրականացնում է տեղեկատվական գործառույթներ հասարակության զանազան շրջանակներին հոգևոր արժեքների, եկեղեցու գործունեության մասին իրազեկելու նպատակով:

Հոգևոր քարոզչության ավանդական միջոցների կողքին մեր առջև բացվում են տեխնոլոգիական նոր հնարավորություններ և միջոցներ, որոնք առաջարկում է այսօրվա աշխարհն իր տեղեկատվական նորամուծություններով և լայն հնարավորություններով:

2015թ. Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժինը

- Լուսաբանել է թեմական բոլոր իրադարձությունները, միջոցառումները, տարածել է տեղեկություններ թեմի հոգևոր քարոզչության մասին
- Աջակցել է թեմական միջոցառումների ու ծրագրերի կազմակերպմանն ու հանրայնացմանը
- Լուսաբանել է թեմի համայնքներում կազմակերպված տարբեր միջոցառումներ, ծրագրեր, այցելություններ: Դրանք լուսաբանվել են թե՛ թեմի պաշտոնական կայքում ու սոց. ցանցերի պաշտոնական էջերում, թե՛ ԶԼՄ-ում
- Հաշվի առնելով, որ ԶԼՄ-ում հրապարակված նյութերում եկեղեցական արարողակարգերին բնորոշ հոգևոր տերմինները հաճախ սխալ են օգտագործվում, հատուկ կարևորեց լրագրողների հետ աշխատանքը, որի արդյունքում 2015 թվականին ունեցանք հոգևոր գրագիտության առավել բարձր ցուցանիշ
- 2015թ. ընթացքում համագործակցել է ՀՀ ՊՆ լրատվության և հասարակայնության հետ կապի վարչության հետ, Երևանի քաղաքապետարանի հանրակրթության, սոցիալական, մշակութային, լրատվական բաժինների հետ: Համագործակցել է ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության հետ
- Կազմակերպել է գործնական հանդիպումներ ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի, Խ. Աբովյանի անվան ԵՊՄՀ-ի լրագրության ֆակուլտետի ուսանողների հետ
- Համագործակցել է գրեթե բոլոր հեռուստաընկերությունների հետ: Համագործակցությունը հիմնականում եղել է լրատվական թողարկումների ու առավոտյան ծրագրերի շրջանակներում
- Ապահովել է ԶԼՄ-ում հոգևորականների մասնակցությունը
- Համագործակցելով «Երկիր Մեդիա » ՀԸ հետ, կազմակերպել է հոգևորականների նկարահանումները «Բարև երկիր» ծրագրի «Լույս ի լուսոյ» շարքում, որտեղ ներկայացվում են օրվա տոնի խորհուրդը, մեկնաբանվում են ավետարանական առակներ
- Աջակցում է «Կենտրոն» հեռուստաընկերության «Ես կամ…» հաղորդաշարին: Հաղորդավարը Տ. Շահե քահանա Հայրապետյանն է
- Կազմակերպել է ասուլիսներ եկեղեցա-

կան տոներն ու թեմական միջոցառումները լուսաբանելու նպատակով

- Նախաձեռնել ու իրականացրել է «Արարատյան քննարկումներ» հոգևոր-քարոզչական ծրագիրը

- Նախաձեռնել ու իրականացրել է «Գրաբարյան օրեր» ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվել է Երևանի պետական ու մասնավոր դպրոցների շուրջ 40 ուսուցչի վերապատրաստում Ծաղկաձորում:

2003թ. Արարատյան Հայրապետական թեմը հիմնեց www.araratian-tem.am և www.qahana.am կայքերը, իսկ ավելի ուշ՝ «qahana.am» և «Արարատյան Հայրպետական թեմ» ֆեյսբուքյան էջերը՝ տեղեկատվական, խորհրդատվական, լրատվական և քարոզչական իրենց առաքելությամբ: 2014թ. www.araratian-tem.am և www.qahana.am կայքերը միացան, ուստի երկու հասցեով գործում է մեկ կայք:

2015թ.-ին բացվեց նաև «Թեմական կյանք» ֆեյսբուքյան էջը, որի առաքելությունն է մեկ տիրույթում համախմբել թեմի համայնքային կյանքը:

- www.araratian-tem.am կամ www.qahana.am կայքն ունի հոգևոր քարոզչության հարուստ փորձառություն, որը 2015 թվականին ունեցել է 764.556 ընթերցող՝ աշխարհի շուրջ 127 երկրներից

- Կայք այցելում են աշխարհի տարբեր երկրներից. այցելությունների թվով առաջատար հնգյակում Հայաստանն է, Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Ֆրանսիան և Գերմանիան

- Կայքը հարուստ է եկեղեցուն, եկեղեցական կյանքին և քրիստոնեությանը վերաբերող զանազան նյութերով: Կայքի ամենաշատ ընթերցված բաժիններն են՝ «Տոներ», «Աղոթքներ»,«Աստվածաշունչ», «Հարցեր քահանային», «Մեծ պահք», «Սուրբ Սարգիս»:

- Տարբեր լրատվամիջոցներ տարածում և արտատպում են qahana.am կայքի հարցերն ու պատասխանները, հարցազրույցները, օրվա խորհուրդը, քարոզչական զանազան նյութերը, քարոզչական գովազդ-հոլովակները.
  - www.1in.am
  - www.arajin.am
  - www.times.am
  - www.blognews.am
  - www.168.am
  - www.aravot.am
  - www.slaq.am
  - www.mediamall.am
  - www.lurer.com
  - www.henaran.am
  - Հանրային ռադիոն
  - «Հ3» հեռուստաընկերությունը

- Ֆեյսբուքում «qahana.am» էջն ունի 40.000 հավանում և շաբաթական 150.000-300.000 այցելու:

- «Արարատյան Հայրապետական թեմ» ֆեյսբուքյան էջը տարածում է թեմի պաշտոնական տեղեկատվությունը

- «Թեմական կյանք Արարատյան Հայրապետական թեմ» ֆեյսբուքյան էջն անդրադառնում է թեմի համայնքներում իրականացվող միջոցառումներին:

Արարատյան Հայրապետական թեմն ունի 2 ռադիոհաղորդում՝ «Շողակն Արարատյան» և «Մանանա»: Դրանք Հայաստանի Հանրային ռադիոյով պարբերաբար և առանց ընդհատումների եթեր են հեռարձակվում 2000 թվականից:

- «Շողակն Արարատյան» ռադիոհաղորդումն իր գործունեության ընթացքում Հանրային ռադիոյի ուղիղ եթերում ունեցել է 400-ից ավելի թողարկում: Ծրագիրն իրականացնում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետության քարոզչությունը: Հայ Եկեղեցու դավանաբանություն, տոներ, խորհուրդներ, ծեսեր, դարերի ընթացքում ստեղծված հոգևոր-մշակութային արժեքներ և հայրաբանական ժառանգություն, գործնական աստվածապաշտության խնդիրներ, բարոյահոգեբանական ոլորտներին առնչվող հրատապ հարցեր. այս հիմնական թեմաների շուրջ ծավալվում են երկխոսություններ Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականի հետ

- Հանրային ռադիոյի եթերում Արարատյան Հայրապետական թեմի «Մանանա» մանկական ծրագիրը ներկայացնում է ավետարանական հետաքրքրաշարժ պատմություններ, որոնք մատուցվում են հեքիաթների և առակների ձևով՝ մատաղ սերնդի միտքն ու հոգին կրթելով քրիստոնեական առաքինությունների, ազգային ավանդույթների, սիրո, գթասրտության, բարության ոգով:

«ՇՈՂԱԿՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ» ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթն Արարատյան Հայրապետական թեմի պաշտոնաթերթն է: Հիմնադրվել է 2000թ.-ին: Երկշաբաթաթերթի առաքելությունն է իրականացնել հոգևոր քարոզչություն, ինչպես նաև՝ լուսաբանել թեմական իրադարձությունները:
Լույս է տեսնում ամսական երկու անգամ: Յուրաքանչյուր համարի տպաքանակը 1000 օրինակ է: 2015 թ.-ին տպագրվել է քսաներկու համար, որից երկուսը՝ տոնական, գունավոր տարբերակով՝ նվիրված Ս. Ծննդյան և Ս. Հարության Տաղավար տոներին:

2015թ. «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթը

- Լուսաբանել է **«Մենք մեր զինվորի կողքին ենք»** բարեգործական ծրագիրը
- Դիմանկարային ակնարկի ժանրով անհատապես ներկայացրել է «Մենք մեր զինվորի կողքին ենք» ծրագրում ընդգրկված շահառուներին
- Հարցազրույցների միջոցով տպագրել է պատմական ակնարկներ հայ ռազմիկի կերպարի մասին՝ ներկայացնելով եկեղեցի-բանակ ամուր միասնությունը
- Տպագրել է հոգևորականների հեղինակած հոդվածներ, թարգմանություններ, որտեղ անդրադարձ է եղել Հայ Եկեղեցու դավանաբանությանը, քրիստոնեությանը, սրբերի կյանքին և գործունեությանը
- Տպագրել է տոնախոսականներ՝ հինգ Տաղավար և Հայ Եկեղեցու կարևորագույն տոների մասին, որոնք հեղինակել են սարկավագներն ու թղթակիցները
- Առանձին խորագրերով պարբերաբար տպագրել է պատմաբանասիրական հոդվածներ, գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ
- Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ներկայացրել է **«Հայոց ցեղասպանություն. «Մեր պատմությունն ու դատը»**-ը խորագիրը, որի շրջանակում տպագրվել են գրական նյութեր, հարցազրույցներ, ակնարկներ
- **«Տոհմածառ»** խորագրի ներքո ներկայացրել է հայ ժողովրդի նյութական և ոչ նյութական մշակութային հարուստ ժառանգության մասին պատմող նյութեր՝ համեմված ժողովրդական ավանդույթներով
- **«Փրկված ձեռագրեր»** խորագիրը կրող հոդվածաշարով ընթերցողներին ներկայացրել է Մեծ Եղեռնի ժամանակ փրկված եզակի ձեռագրերի և ձեռագրական հավաքածուների մասին պատմող բացառիկ նյութեր
- **«Արցախի գրչության կենտրոնները»** հոդվածաշարով ընթերցողին ներկա-

յացրել է Արցախի, ինչպես նաև հարակից այն շրջանների միջնադարյան հայկական գրչության կենտրոնների պատմությունն ու ձեռագրական ժառանգությունը, որոնք տարբեր ժամանակաշրջաններում ընդգրկված են եղել Արցախի պատմաաշխարհագրական և վարչաքաղաքական տարածքում և հարստացրել ու ամբողջացրել են նրա մշակութային կյանքը

- **«Կիսախոնարհ եկեղեցիներ»** խորագրով ներկայացրել է Հայաստանի հյուսիսարևելյան տարածքում մոռացության մատնված եկեղեցիների պատմությունը, ներկա վիճակը
- **«Միջնադարյան գրչության դպրոցներ»** հոդվածաշարով անդրադարձել է տարբեր վանական համալիրների մշակութային և հոգևոր գործունեությանը
- **«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանը»** հոդվածաշարով ներկայացրել է բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ մատենադարանի տարբեր տարիների գործունեության մասին
- **«Հայտնի և անհայտ Կոմիտասը»** խորագրով անդրադարձել է հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, բանահավաք, երաժշտագետ, երգիչ, խմբավար, մանկավարժ Կոմիտաս վարդապետի կերպարին, նրա ծավալած գործունեությանը՝ ընթերցողի համար բացահայտելով նրա կերպարի հայտնի և անհայտ շերտերը
- Տպագրել է մշակութային թեմաների շուրջ հարցազրույցներ
- Անդրադարձել է Հայ եկեղեցու ավանդույթներին, Խորհուրդներին, քրիստոնեական խորհրդանշաններին, Մեծ Պահքին
- Տպագրել է հոգևոր թեմաներով թարգմանություններ ռուսերենից, հունարենից, գրաբարից աշխարհաբար փոխադրություններ, որոնք ունեն շարունակական բնույթ (Ս. Հովհան Ոսկեբերան, Վանական Սիմոն Աֆոնցի, Հայր Մաքսիմոս Խոստովանող, Հայր Պահսիոս Աթոսացի)
- Անդրադարձել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող տարբեր ձեռագրերի, գանձերի
- **«Հոգևոր խրատանի»** հոդվածաշարում ներկայացրել է Նարեկավանքի վանահայր, հռչակավոր փիլիսոփա, երաժիշտ, հռետոր և բանաստեղծ Անանիա Նարեկացու «Հոգեշահ խրատներ»-ը՝ ուղղված հոգևորականներին, վանականներին և հավատացյալներին:

«ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ» ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ

*Նպատակ ունենալով բացահայտել ավետարանական ճշմարտությունները և Ս. Գիրքն ավելի հասանելի և հասկանալի դարձնել հայ հանրությանը՝ Արարատյան Հայրապետական թեմը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ անցկացրեց **«Ավետարանների սերտողության»** հեռավար դասընթացը:*

Հեռավար դասընթացների 10 շաբաթների ընթացքում անդրադարձ կատարվեց Քրիստոսի երկրային կյանքի տարիներին՝ համադրելով չորս Ավետարանները: Յուրաքանչյուր դասընթացի հետ զուգահեռ առաջարկվեց նաև հոգևոր գրականություն: «Ավետարանների սերտողության» հեռավար դասընթացին մասնակցեց 17 ուսանող:

ԿՐԹԵԼՈՎ ՀՈԳԻՆ. ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանը հայ ժողովրդի՝ գրքի և գրականության հանդեպ ձևավորած ավանդույթների և հոգևոր արժեքների շտեմարանն է :

1998թ. Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի (այն ժամանակ՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ) նախաձեռնությամբ Ազգային գրադարանից բերված գրքերի միջոցով (շուրջ 730 միավոր գիրք և պարբերական) հիմնվեց Արարատյան Հայրապետական թեմի գրադարանը: Գրադարանն ունի մեծարժեք հնատիպ գրականություն, այդ թվում՝

- 1899թ. Մոսկվայում լույս տեսած «Լազարյանի Ավետարանը»՝ 887թ. մագաղաթյա երկաթագիր տառերով լուսատիպ նմանահանությամբ
- 1853թ. Կ. Պոլսում լույս տեսած «Շարակնոց»-ը
- 1850թ. Մոսկվայում լույս տեսած Մ. Մսերյանցի «Հրահանգ քրիստոնեական հավատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց»
- Ս. Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմություն» (Վաղարշապատ, 1897թ.)
- Ս. Ձալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (Տփղիս, 1858թ.)
- Հ. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հին գավառացն Արարատայ» (էջմիածին, 1842թ.)

Հոգևոր գրականությունից բացի գրադարանն ունի նաև պատմական, աշխարհագրական, գրական-գեղարվեստական, մատենագիտական-տեղեկատվական, մշակույթի տարբեր բնագավառներ ներկայացնող գրականություն:

Գրադարանից օգտվում են հոգևորականներ, ուսուցիչներ, հավատացյալներ, լրագրողներ, գիտության և արվեստի ներկայացուցիչներ: 2015թ. գրադարանը համալրվել է 217 միավոր գրականությամբ և երկու անուն մամուլով:

Ներկայումս գրադարանն ունի 3000 միավոր գրականություն: Առաջիկայում նախատեսվում է թեմի գրադարանը պատճենահանման միջոցով համալրել հնատիպ հոգևոր գրականությամբ՝ ընտրված ՀՀ Ազգային գրադարանի Մայր գրացուցակներից:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ «ԿԵՆԴԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ»

Կենդանի գրադարանը նման է սովորական գրադարանի, սակայն նրանում «գրքերը» մարդիկ են, ովքեր պատրաստ են կիսվել «ընթերցողների» հետ իրենց փորձով և կարող են անկեղծորեն պատասխանել նրանց հարցերին: Իսկ ընթերցանությունը զրույց է, որ տեղի է ունենում «գրքի» և «ընթերցողի» միջև՝ կենդանի շփմամբ:

2015թ. Արարատյան Հայրապետական թեմի «Կենդանի գրադարան» ծրագիրն առաջին անգամ անցկացվեց Երևանում՝ Միսաք Մանուշանի անվան պուրակում՝ «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակներում: Ծրագրի մասնակիցներն Արարատյան Հայրապետական թեմի կիրակնօրյա դպրոցների սաներն էին: «Բարև, ես գիրք եմ» կարգախոսով մեկնարկած Կենդանի գրադարանի մասնակիցներն «ընթերցողների» հետ կիսվեցին իրենց անձնական պատմություններով, փորձառությամբ և գիտելիքներով: «Կենդանի գրքերը» հոգևոր ուղղվածություն ունեին և նպատակ՝ սեր ու հետաքրքրություն արթնացնել դեպի հոգևոր գրականությունը:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ «ԳՐԱԲԱՐՅԱՆ ՕՐԵՐ» ԾՐԱԳԻՐԸ

2014թ. հոկտեմբեր 11-ին՝ Ս. Թարգմանչաց տոնին, առաջին անգամ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմը Երևանի ավագ դպրոցների 10-11-րդ դասարանի աշակերտների համար նախաձեռնեց «Գրաբարյան օրեր» ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ և ՀՀ ԿԳ նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ԱՀԹ թեմական խորհրդի ատենապետ և «Փյունիկ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Լևոն Սարգսյանի աջակցությամբ:



Ծրագրի շրջանակում՝

- Յուրաքանչյուր դպրոցում կազմակերպվեցին միջոցառումներ, գրաբարյան տեքստերի ընթերցումներ, գրաբարի տեսադասընթացների ցուցադրություններ, ինչպես նաև՝ ուսուցիչներն աշակերտներին նախապատրաստեցին փոքրիկ թեստային մրցույթի
- Տարվա ընթացքում տարբեր դպրոցներում եղան գրաբարի բաց դասեր
- Ծրագրի ընթերցումների փուլի ավարտին դպրոցներից ներկայացված հայտերով 90 աշակերտ մասնակցեց գրաբարի առաջին օլիմպիադային: Լավագույնը ճանաչված երեք աշակերտներն ու նրանց ուսուցիչները պարգևատրվեցին համակարգիչներով ու պլանշետներով: Խրախուսական մրցանակներ ստացան բարձր արդյունքներ արձանագրած աշակերտները
- Պատանիներին ոգևորելու և գրաբարի ուսուցումը հանրայնացնելու նպատակով նկարահանվեց քսան տեսահոլովակ
- Կազմակերպվեց ուխտագնացություն դեպի Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց և Մուղնիի Ս. Գևորգ եկեղեցիներ, որին մասնակցեց հարյուրից ավելի աշակերտ՝ իրենց ուսուցիչների հետ միասին
- Նոյեմբերի 25-ին ԱՀԹ առաջնորդարանում տեղի ունեցավ «Գրաբարի կարևորությունն այսօր և դասավանդման արդի խնդիրները դպրոցում» խորագրով քննարկում: Այն նպատակ ուներ ամփոփել «Գրաբարյան օրեր» ծրագրի մեկամյա աշխատանքները, լսել մասնագետների ու կրթության պատասխանատուների կարծիքներն ու տեսակետները՝ գրաբարի վերարթնացմանն ուղղված ծրագրի շարունակության համար
- Դեկտեմբերի 18-19-ը Ծաղկաձորում թեմի «Գրաբարյան օրեր» ծրագրի շրջանակում իրականացվեց ուսուցիչների վերապատրաստման երկօրյա դասընթաց: Դասընթացին մասնակցեց Երևանի պետական ու մասնավոր տարբեր դպրոցների շուրջ քառասուն ուսուցիչ
- Երևանի թիվ 2 ավագ դպրոցում 2015թ. սեպտեմբերից մեկ դասարանի համար գրաբարը ներառվել է պարտադիր առարկաների շարքում՝ շաբաթական մեկ դասաժամ ծավալով:

«ԱՐԱՐԱՏՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ»

Դեռևս 2014թ.-ին Արարատյան Հայրապետական թեմը «Ծիրանի» մշակութային հանգույց»-ի հետ համատեղ հիմք դրեց նոր նախագծի՝ «Արարատյան քննարկումներ» խորագրով՝ նպատակ ունենալով հնարավորություն ստեղծել հայացք գցելու մեր ազգային նկարագրի, արժեհամակարգի, ազգային առանձնահատկության, հարուստ մշակույթի վրա և վերարժևորել դրանք: Քննարկման թեմաներն էին.

- Խորդանշային մտածողությունը հայ ճարտարապետության մեջ
- Հայոց էպոսի չորս հիմնասյուները
- Հայերի ներդրումը լուսանկարչության արվեստում
- Բժշկություն երաժշտությամբ
- Մշակույթ և հասարակություն. մշակույթի հասարակական դերը
- Մարդու էությունը
- Ի՞նչ են հայտնաբերում հնագետները Հայաստանում
- Կոմիտաս
- Կյանք և հարություն
- Անհատ և հասարակություն
- Գիտելիքի և իմացության խնդիրը «Մենք»-ի մասին
- Վարքն ուղղորդող մշակութային ֆենոմենները
- Հասարակական համագործակցության տիպերի վերլուծությունը

Քննարկումներն իրականացան արվեստագետների, գիտնականների, մշակութաբանների, հոգեբանների, հոգևորականների և ազգագրագետների առաջնորդությամբ.

- Արուսյակ Սահակյան՝ ազգագրագետ և բանագետ
- Վահան Քոչար՝ լուսանկարիչ
- Աղասի Թադևոսյան՝ սոցիալ-մշակութային մարդաբան
- Արմինե Հայրապետյան՝ հնագետ և հեղինակ-կատարող
- Պավել Ավետիսյան՝ ՀՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն
- Աշոտ Գրիգորյան՝ ճարտարապետ
- Մխիթար Գաբրիելյան՝ ազգագրագետ
- Սերգեյ Բաբայան՝ կոնֆլիկտաբան, մարդաբան
- Արթուր Շահնազարյան՝ կոմիտասագետ, կոմպոզիտոր
- Նիկոլ Մարգարյան՝ ազգագրագետ, մշակութաբան:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Եկեղեցին ունի հստակ առաքելություն՝ դաստիարակել բարձր արժեքային և բարոյական համակարգ ունեցող սերունդ: Իսկ պատանիները և երիտասարդները եկեղեցու ուշադրության կենտրոնում եղել են միշտ, առավել ևս ներկա ժամանակաշրջանում, երբ սերնդի քրիստոնեական դաստիարակության հարցը եկեղեցու ամենօրյա առաքելությունն է:

Արարատյան Հայրապետական թեմի քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնը հիմնադրվեց 1992թ. հունվարին: Ներկայումս գրասենյակը կոչվում է Քրիստոնեական դաստիարակության կենտրոն:

Գրասենյակի հիմնական պարտականությունն է թեմի տարածքում գործող քրիստոնեական դաստիարակության (կիրակնօրյա դպրոցներ) կրթօջախներում ուսումնական պրոցեսի կազմակերպումը, վերահսկումն ու ըստ հնարավորության՝ աջակցությունը: Կրթօջախները գործում են ոչ միայն եկեղեցիներին կից, այլև՝ մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների, մանկատների, հանրակրթական դպրոցների տարածքներում:

Դասընթացների շրջանակում երեխաները ծանոթանում են՝

- ազգային-եկեղեցական տոներին
- աստվածաշնչյան պատմություններին
- եկեղեցու պատմությանը
- սրբերի վարքին
- հաղորդակցվում են հոգևոր գանձերին՝ շարականներին, աղոթքներին:

Բոլոր կիրակնօրյա դպրոցներում ուսուցիչների նախաձեռնությամբ տարվա ընթացքում անցկացվում են ազգային-եկեղեցական տոնահանդեսներ:

Կիրակնօրյա դպրոցները գործում են հոգևոր հովիվների մշտական հոգածության ու խնամքի ներքո:

2015թ. դրությամբ Արարատյան Հայրապետական թեմում գործում են քրիստոնեական դաստիարակության 18 կրթօջախներ (կիրակնօրյա դպրոցներ), որոնք տեղակայված են Երևանի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների համայնքներում, դասավանդում է 18 մանկավարժ, աշակերտների թիվը 1169 է:

1. Նոր Նորքի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան կիրակնօրյա դպրոց: Տեղակայված է թիվ 197 դպրոցի շենքում: Ունի 3 մանկավարժ և 234 աշակերտ

2. Ս. Գևորգ եկեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ և 30 աշակերտ

3. Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատուն: Ունի 2 մանկավարժ և 80 աշակերտ

4. Հարավ-Արևմտյան թաղամասի Ս. Երրորդություն եկեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 5 մանկավարժ և 125 աշակերտ

5. Մասիսի Ս. Գրիգոր Նարեկացու անվան կիրակնօրյա դպրոց: Գործում է Մասիս քաղաքի թիվ 2 դպրոցի շենքում: Ունի 4 մանկավարժ և 78 աշակերտ

6. Արտաշատի տարածաշրջանի Բյուրավան գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ կեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 2 մանկավարժ և 55 աշակերտ

7. Էրեբունի համայնքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն: Ունի 1 մանկավարժ և 170 աշակերտ

8. Աջափնյակ համայնքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն: Ունի 1 մանկավարժ և 70 աշակերտ

9. Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 3 մանկավարժ և 46 աշակերտ

10. Երևանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ և 30 աշակերտ

11. Արարատի մարզի Մխչյան գյուղի Ս. Հով-

հաննես եկեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ և 32 աշակերտ

12. Արարատի մարզի Մրգավետ գյուղի կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ և 42 աշակերտ

13. Արարատի մարզի Նշավան գյուղի կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ և 60 աշակերտ

14. Արարատի մարզի Բարձրաշեն գյուղի կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ և 25 աշակերտ

15. Արարատի մարզի Զրաշեն գյուղի կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ և 25 աշակերտ

16. Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղի կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ 25 աշակերտ

17. Արարատի մարզի Շահումյան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ մանկավարժ և 80 աշակերտ

18. Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու կիրակնօրյա դպրոց: Ունի 1 մանկավարժ ուսուցիչ և 25 աշակերտ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոնը հիմնադրվել է 2002թ.-ին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Տիկնանց միության Հայաստանի երեխաների հովանավորման ծրագրի (CASP) համագործակցությամբ և «Գաֆեսճյան թանգարան» հիմնադրամի հովանավորությամբ:

Կրթադաստիարակչական կենտրոնի առաքելությունն է կրթել հայ երիտասարդին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանության, սրբազան ավանդությունների համաձայն, նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ, հայրենասիրական ոգի և գիտակցություն, ինչպես նաև ապահովել մասնագիտական կրթություն:

2015թ. կենտրոնում իրականացվել են հետևյալ դասընթացները

1. անգլերենի դասընթաց, մասնակցել է 124 աշակերտ
2. իսպաներենի դասընթաց, մասնակցել է 43 աշակերտ
3. գրաբարի դասընթաց, մասնակցել է 10 աշակերտ
4. համակարգչային դասընթաց, մասնակցել է 129 աշակերտ
5. սրբանկարչության դասընթաց, մասնակցել է 86 աշակերտ
6. բատիկի դասընթաց, մասնակցել է 68 աշակերտ
7. ժեստերի լեզվի ուսուցման դասընթաց, մասնակցել է 16 աշակերտ:

Սրբանկարչության, մանրանկարչության, բատիկի դասընթացների շրջանակներում ՀԵԵՄ-ի կրթադաստիարակչական կենտրոնն ամեն տարի կազմակերպում է հաշվետու ցուցահանդեսներ՝ ներկայացնելով արված աշխատանքները:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՔԻՆ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Բարեգործությունը քրիստոնեական կենցաղավարության ու բարեպաշտության հիմնական և անհրաժեշտ դրսևորումներից մեկն է: Ս. Հովհան Ոսկեբերանի ձևակերպմամբ՝ հարուստ լինել՝ չի նշանակում շատ ունենալ, այլ՝ շատ տալ: Ահա այս տեսլականով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը (այն ժամանակ թեմի առաջնորդական փոխանորդ) դեռևս 1993թ.-ին ստեղծեց ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակը, որը ցայսօր ծավալում է իր գործունեությունը: Այդ կարևոր նպատակին իրենց ֆինանսական օգնությունն են բերում Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան և Արևմտյան, Ավստրալիայի և Եգիպտոսի թեմերը, Գերմանիայի բողոքական եկեղեցու հետևորդները, բարեգործական կազմակերպություններ ու անհատ բարերարներ Մեծ Բրիտանիայից, Բելգիայից, Հոլանդիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Արգենտինայից և Երուսաղեմից:

Հաշվառման են վերցվել Արարատյան Հայրապետական թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող մինչև 18 տարեկան շուրջ 13.000 միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ: Նրանց օգնելու նպատակով գրասենյակը փորձում է բարերարներ գտնել Հայ Առաքելական Եկեղեցու արտասահմանյան թեմերում, բարեգործական կազմակերպություններում:

Միակողմանի ու երկկողմանի ծնողազուրկ երեխաները ծրագրից օգտվում են մինչև 18 տարեկանը:

1993թ.-ից սկսած ավելի քան 9.850 երեխա կանոնավորապես հովանավորվել կամ հովանավորվում են:

2015թ. «Ծնողազուրկ երեխաների օգնության հիմնադրամ»-ին հատկացված նվիրատվությունը կազմել է 165.098 ԱՄՆ դոլար: Ծնողազուրկ երեխաների նպաստների հատկացման ընդհանուր գումարը կազմել է 180.825 ԱՄՆ դոլար, որը բաշխվել է 664 ընտանիքների 1007 ծնողազուրկ երեխաների.

1. միակողմանի ծնողազուրկ՝ 894 երեխա
2. երկկողմանի ծնողազուրկ՝ 44 երեխա
3. բազմազավակ (ընտանիքում 4 և ավելի երեխաներ) ընտանիքների 69 երեխա:

ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Մարդկության առջև ծառացած ամենասարսափելի մարտահրավերներից մեկը ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ի խնդիրն է: Ողջ աշխարհին համակած այս տենդը չշրջանցեց նաև Հայաստանի Հանրապետությունը: Մեր ազգաբնակչության պարագայում ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ով վարակակիրների համեմատական թիվը հարուցում է Հայ Եկեղեցու մտահոգությունը և հայ հոգևորականին մղում անմիջական միջամտության, առավել ուշադրության՝ հիվանդության ծագման հոգևոր-արժեքային ասպեկտին և դեպի քրիստոնեական հավատք մեր հոտի դիմաշրջման:

Արարատյան Հայրապետական թեմը «Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան Կլոր սեղան» հիմնադրամի աջակցությամբ 2011թ.-ի սեպտեմբերից Երևանում հիմնեց ցերեկային կենտրոն, որի նպատակն է նվազեցնել Երևանում և մերձակա շրջաններում բնակվող ՄԻԱՎ-ով ապրող և ներարկային թմրամիջոցներ օգտագործող մարդկանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական մեկուսացումը և նպաստել նրանց ինտեգրմանը, սոցիալական վիճակի բարելավմանը, հոգևոր արժեքների զորացմանը:

Կենտրոնի հոգևոր հովիվն է Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանը: Ներկայումս «Ցերեկային Կենտրոն» հաճախում է 349 շահառու և 153 երեխա:

- **Հովվական խնամք և աջակցություն**

Ցերեկային կենտրոնում հովվական խնամք և աջակցություն է տրամադրվում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թմրամիջոցների ներարկային օգտագործողներին ու նրանց երեխաներին: Հոգևորականն ամեն շաբաթ օր իրականացնում է քարոզներ, կատարում խմբային աշխատանք՝ հոգևոր թեմաներով: Կազմակերպվում է ֆիլմերի դիտում և քննարկում: Իրականացվում են ուխտագնացություններ Հայաստանի տարբեր եկեղեցիներ ու սրբավայրեր:

Հոգևորականի կողմից կատարվում է նաև անհատական խորհրդատվություն, իրականացվում են տնայցեր, կատարվում տնօրհնեքի կարգ, որոնց նպատակն է նվազեցնել շահառուների ներքին հոգեբանական լարվածությունն ու խարանը:

2015թ. ընթացքում իրականացվել է.

1. Քարոզ շահառուների համար (մասնակցել է 472 շահառու)
2. Աստվածաշնչի սերտողություն երեխաների համար (մասնակցել է 210 երեխա)
3. Հոգևոր անհատական խորհրդատվություն (18 շահառուի համար)
4. Հոգևոր հովվի տնայց (10 անգամ):

- **Հոգեբանական աջակցություն**

Հոգեբանական աշխատանքներն իրականացվում են խմբային ու անհատական տարբերակներով: Դրանք նախատեսված են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թմրամիջոցների ներարկային օգտագործողների ու նրանց ընտանիքների անդամների համար: Երեխաների մոտ աշխատանքներն իրականացվում են վախերի հաղթահարման, մեկուսացման միտումների նվազեցման, շփման հմտությունների մշակման ուղղությամբ:

- **Սոցիալական աջակցություն**

Սոցիալական աջակցությունն իր մեջ ներառում է

1. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թմրամիջոցների ներարկային օգտագործողներին հավասարը հավասարին խորհրդատվություն
2. ՀՌՎ և տուբերկուլոզի բուժման կարգապահության հետևողականություն
3. Տնայցեր
4. Սննդի փաթեթների տրամադրում
5. Շահառուի խնամք հիվանդանոցում գտնվելու ժամանակ և անհրաժեշտ դեղորայքի տրամադրում
6. ՄԻԱՎ-ով ապրող հղի կանանց խնամք հղիության ամբողջ ընթացքում, ինչպես նաև հետծննդյան շրջանում և հիվանդանոցում գտնվելու ժամանակ, ուղղորդում հոգևորականի և հոգեբանի մոտ անհրաժեշտ աջակցություն ստանալու
7. Դաշտային աշխատանք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թմրամիջոցների ներարկային օգտագործողների ընտանիքների, նրանց ընկերների և ազգականների հետ՝ բացահայտելու այն հիմնական առողջական և սոցիալական խնդիրները, որ ունեն շահառուները
8. Խորհրդատվություն կենտրոնի շահառուների ընտանիքների անդամներին՝ հիմնականում կենտրոնանալով այն վարքագծին, որ պետք է դրսևորեն ընտանիքի անդամները շահառուների հանդեպ
9. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող թեմաներով փոխօգնության խմբերի համավարում
10. Տեղեկատվական դասընթացներ
11. Սոցիալական ուղղորդումներ:

2015թ. ընթացքում իրականացվել է՝

1. Հավասարը հավասարին խորհրդատվություն և սոց. ուղղորդում (300 շահառուի համար)
2. Թմրամիջոցներ օգտագործողներին հավասարը հավասարին խորհրդատվություն (4 շահառուի համար)
3. Տնայց (28 անգամ)
4. Ճիշտ բուժման հետևողականություն (140 շահառուի համար)
5. Դեղերի փոխանցում շահառուներին (42 շահառուի համար)
6. Սննդի փաթեթի և հիգենայի պարագաների տրամադրում (244 շահառու)
7. Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից տաք կերակուրի տրամադրում շաբաթական 30 շահառուի:

- **Ակումբային գործունեություն**

1. Խեցեգործության խմբակ (մասնակցել է 42 շահառու)
2. Խեցեգործության խմբակ երեխաների համար (մասնակցել է 56 երեխա)
3. Ձեռքի աշխատանքի խմբակ (մասնակցել է 30 շահառու)
4. Ձեռքի աշխատանքի խմբակ երեխաների համար (մասնակցել է 25 երեխա):

- **Միջոցառումներ**

1. Հայկական Կարմիր խաչի ընկերության երիտասարդական բաժնի աշխատակիցների ու կամավորների կողմից առողջ ապրելակերպի խթանման շրջանակներում իրականացվել է «Բերանի խոռոչի հիգիենա» թեմայով կրթատեղեկատվական դասընթաց, որին մասնակցել է 30 երեխա
2. Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կենտրոնի երեխաների համար կազմակերպվել է այցելություն Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոն՝ Թումանյանի հեքիաթների ներկայացմանը
3. Սուրբ Հարության տոնին ընդառաջ կազմակերպվել է միջոցառում և տոնական զատկական ճաշ՝ շահառուների, երեխաների և Հայկական Կարմիր Խաչի ընկերության ներկայացուցիչների համար
4. ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակության օրը, Հայկական Կարմիր Խաչի կամավորների հետ միասին, կազմակերպվել է մոմավառության արարողություն Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում, որից հետո կատարվել է հոգեհանգստի կարգ՝ ՁԻԱՀ-ից մահացածների համար
5. Հայկական Կարմիր Խաչի հետ համատեղ, «Ցերեկային Կենտրոն»-ի շահառուների 27 երեխաների և 15 մեծահասակների համար կազմակերպվել է ճանաչողական-ժամանցային բնույթ կրող այց Երևանի կենդանաբանական այգի
6. Հայկական Կարմիր Խաչի ընկերության Երիտասարդական թևի և կամավորների նախաձեռնությամբ «Ցերեկային Կենտրոն»-ում կազմակերպվել է բակային ճամբար՝ կենտրոնի շահառուների երեխաների համար:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ և ՏԵՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

2002թ. Արարատյան Հայրապետական թեմում գործում է միջազգային հասարակական կազմակերպությունների հետ ԱՀԹ-ի կապերի համակարգման բաժինը, որը միջազգային հասարակական կազմակերպությունների և բարեգործական հիմնադրամների հետ իրականացնում է բազմաբնույթ սոցիալական ծրագրեր: Համագործակցության արդյունքում Արարատյան Հայրապետական թեմը պարբերաբար ընդգրկվում է հումանիտար օգնության ծրագրերում: Վերը նշված օգնության առկայությունը հնարավորություն է ընձեռում եկեղեցական և պետական տոների առթիվ կազմակերպել և իրականացնել բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ ծնողազուրկ երեխաների, հաշմանդամների, միայնակ ծերերի, բազմազավակ և կարիքավոր ընտանիքների համար:

- Իրականացվում է բազմակողմանի համագործակցություն տեղական հասարակական կազմակերպությունների, ընկերությունների և միությունների հետ
- Կազմակերպվում են բարեգործական այցելություններ ծերանոցներ, մանկատներ, մանկապարտեզներ, միայնակ և անօգնական ծերերի բնակարաններ և այլն
- Աջակցություն է ցուցաբերվում թեմի եկեղեցիների ծխական համայնքներում ընդգրկված կարիքավոր հավատացյալներին, ԱՀԹ-ի կրթական հաստատություններին և մանկական երգչախմբերին, ինչպես նաև թեմի երիտասարդաց միությունների բարեգործական նախաձեռնություններին

2014թ. նոյեմբերի 1-ից բաժինը վերանվանվել է «Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապերի համակարգման բաժին»:

Միջազգային հասարակական World Vision Armenia, WCC Armenia Round Table Foundation, ARCS կազմակերպությունների, ինչպես նաև անհատ բարերարների հետ համագործակցության արդյունքում Արարատյան Հայրապետական թեմում 2015թ. նախաձեռնվել և կյանքի են կոչվել բազմաբնույթ բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ:

- Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնություն տոնի կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել թեմին օգնության դիմումներ ներկայացրած անապահով 29 ընտանիքների (գրենական պիտույքներ, հագուստ, սնունդ, ծածկոցներ, կոշիկ, հիգիենայի պարագաներ)
- Ս. Վարդանանց տոնին օգնություն է տրամադրվել 23 ազատամարտիկների ընտանիքների (գրենական պիտույքներ, հագուստ, կոշիկ)
- Ս. Սարգիս զորավարի տոնի կապակցությամբ «Հավատ և սեր» բարեգործական հասարակական կազմակերպության 30 հաշմանդամ երեխաների բաժանվել են նվերների փաթեթներ (գրենական պիտույքների փաթեթներ, բիժուտերիա, DVD սկավառակներ)
- Ամերիկաբնակ անհատ բարերարը նվիրաբերել է 100 զույգ գուլպա, որը հատկացվել է «Ես կամ» հաղորդաշարին՝ կարիքվոր ընտանիքներին բաշխելու նպատակով
- Տեառնընդառաջի տոնի կապակցութ-

յամբ «ԱԳՆԱ» ԲՀԿ-ում գրանցված խիստ կարիքավոր 50 ընտանիքների բաժանվել է սնունդ, կոշիկ, գրենական պիտույքների փաթեթներ

- Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան թիվ 14 հատուկ դպրոց կատարած բարեգործական այցելության ժամանակ դպրոցի 99 սաներին նվիրաբերվել է քաղցրավենիք և նպարեղեն
- Անհատ բարերար Հրանտ Շահսուվարյանը Դավթաշենի Ս. Նահատակաց եկեղեցու հոգացության տակ գտնվող 3 կարքավոր ընտանիքներին հատկացրել է 40.000-ական դրամ օգնություն

պիտույքների փաթեթներ

- Մայրության տոնի առթիվ էրեբունի վարչական շրջանի զոհված ազատամարտիկների 60 մայրերի ու կանանց բաժանվել է սնունդ և ձմեռային կոշիկներ
- Մայրության ու Գեղեցկության տոնի կապակցությամբ կազմակերպվել է համատեղ միջոցառում «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամի հետ: Մասնակից 50 զոհված ազատամարտիկների մայրերին ու կանանց բաժանվել է հագուստ և պայուսակ

- Ծաղկազարդի տոնի կապակցությամբ Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցում կազմակերպված բարեգործական միջոցառման մասնակից «Ալեքս» և «Լույսի Աստղ» ՀԿ-ներում հաշվառված 40 հաշմանդամ երեխաներ ստացել են «Սկիզբ» բարեգործական ՀԿ-ի տրամադրած մանկական գլխարկները և խաղալիքները
- Ծաղկազարդի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում «Մանկունք» երգչախմբի 16 սաների մասնակցությամբ, սաներին բաժանվել է գրենական

- Ս. Հարության տոնի առթիվ անհատ բարերար Հովհաննես Հովսեփյանի կողմից նվիրաբերված 500կգ. սնունդը (բրինձ, շաքարավազ, ոլոռ, ոսպ, մակարոն) տրամադրվել է Ս. Հովհաննես եկեղեցու 50, ինչպես նաև թեմին դիմած 50 կարիքավոր ընտանիքների: Զատկական ծրագրի շրջանակներում վերոնշյալ ընտանիքներին հատկացվել է նաև ձմեռային կոշիկ, գրենական պիտույքներ, հիգիենայի պարագաներ, կոշիկ, ծածկոց, հագուստ
- Ս. Հարության տոնի առթիվ անհատ

բարերար Հերմինե Սարգսյանի՝ԱՀԹ-ին նվիրաբերած հավկիթը, պայուսակները և բիժուտերիան բաժանվել է թեմին օգնության համար դիմած 20 անապահով ընտանիքների

- Ս. Հարության տոնի առթիվ հագուստ, ձմեռային կոշիկ, խաղալիք, նվերների փաթեթներ (գրենական պիտույքներ, բիժուտերիա, փոքր պայուսակներ) են նվիրաբերվել «Տաթև» հաշմանդամ երեխաների ՀԿ 44 հաշմանդամ երեխաների

- Անհատ բարերար Հերմինե Սարգսյանը հատկացրել է հավ, որը բաժանվել է թեմին աջակցության խնդրանքով դիմած 20 կարիքավոր ընտանիքների

- Ս. Հարության տոնի առթիվ անհատ բարերար Թամարա Գրիգորյանի տրամադրած օգնությունը (հավկիթ, ձեթ, գինի, մակարոնեղեն, հյութ) հատկացվել է Արարատի Ս. Հակոբ եկեղեցու 50 կարիքավոր հավատացյալների, ինչպես նաև Ավշար, Այգավան, Սուրենավան, Արմաշ գյուղերի և Արարատ քաղաքի 200 անապահով ընտանիքների

- Երեխաների միջազգային օրվա առթիվ բարեգործական այց է իրականացվել Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոն, որի ընթացքում 56 երեխաների նվիրաբերվել է հագուստ, խաղալիքներ, կոշիկներ, քաղցրավենիք, հյութեր, հիգիենայի պարագաներ, գրենական պիտույքներ

- Ս. Աստվածածնի վերափոխման տոնին աջակցություն է ցուցաբերվել Գուգարաց թեմի «Ձեռք մեկնիր» խորագիրը կրող բարեգործական նախաձեռնությանը. 60 անապահով ընտանիքների տրամադրվել է մանկական հագուստ, կոշիկ, ծածկոցներ, գրենական պիտույքներ

- Անհատ բարերար Վահագն Առաքելյանի աջակցությամբ ԱՀԹ-ում կյանքի է կոչվել «Օգնություն Ճամբարակցիներին» բարեգործական ծրագիրը, որի ընթացքում սահմանամերձ Ճամբարակ քաղաքի կիրակնօրյա դպրոցին նվիրաբերվել է տպիչ սարք, կիրակնօրյա դպրոց հաճախող 65 աշակերտներին՝ գրենական պիտույքների փաթեթներ: Ճամբարակի թիվ 3 և թիվ 5 մանկապարտեզների 191 սաներին տրամադրվել է քաղցրավենիք, խաղալիքներ, հագուստ, ձմեռային կոշիկ, գրենական պիտույքներ: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 256 երեխաների

- Մոնրեալի հայ համայնքի աջակցությամբ, Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ իրականացված բարեգործական ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել «Առաքե-

լություն Հայաստան» Մասիսի ցերեկային կենտրոն հաճախող 65 միայնակ ծերերի: Կատարվել են նաև 10 տնայցեր բազմազավակ և խիստ կարիքավոր ընտանիքներ, նրանց տրամադրվել է դրամական աջակցություն

- Անհատ բարերար տիար Արթին Գրիգորյանի բարերարությամբ 20.000-ական դրամ օգնություն է տրամադրվել Ս. Երրորդություն եկեղեցու համայնքի անապահով 27 ընտանիքների
- Մասիս քաղաքի 3 զոհված ազատամարտիկների կարիքավոր ընտանիքների հանձնվել են կենցաղային իրեր և Աստվածաշնչեր
- Հաշմանդամների միջազգային օրվա առթիվ կազմակերպված բարեգործական միջոցառման մասնակից Արաբկիր վարչական շրջանի 70 հաշմանդամներ ստացել են ճմեռային կոշիկ, խաղալիք, գրենական պիտույքներ, հագուստ
- Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ հագուստ, խաղալիք, գրենական պիտույքների փաթեթներ, կոշիկ է տրամադրվել Ավանի հաշմանդամ երեխաների առողջակրթական կենտրոնի 35 սաներին
- Սարգիս Սեյրանյանի բարերարությամբ Նորքի թիվ 17 հատուկ դպրոցի 80 երեխաների համար կազմակերպվել է հյուրասիրություն, բաժանվել են խաղալիքներ և գրենական պիտույքների փաթեթներ
- ԱՀԹ «Ձմեռ Պապ» նախագծի միջոցառմանը մասնակից 77 երեխաներ ստացել են ամանորյա նվերների փաթեթներ (խաղալիքներ, հագուստ, մանկական կոշիկ, գրենական պիտույքներ)
- Անհատ բարերար Հովհաննես Հովսեփյանի կողմից նվիրաբերված 490կգ. սնունդը (բրինձ, շաքարավազ, ոլոռ, ոսպ, հնդկաձավար) բաշխվել է 80 կարիքավոր ընտանիքների՝ Ամանորի և Ս. Ծննդյան տոների կապակցությամբ
- Ս. Հովհաննես եկեղեցու կիրակնօրյա դպրոցի աշակերտներին, ինչպես նաև անգլերենի և երգի խմբակների 30 սաներին բաժանվել է հագուստ, քաղցրավենիք, գրենական պիտույքներ
- Առաջին կարգի հաշմանդամի, իր դիմումին ընդառաջ, թեմի կողմից հատկացվել է համակարգիչ
- Թեմի կիրակնօրյա դպրոցների 25 ուսուցչի բաշխվել է հագուստ և կոշիկ
- «Օգնության ձեռք» բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվել են ամանորյա տնայցեր Մխչյան և Դիմիտրով գյուղերի 5 խիստ կարիքավոր ընտանիքների, որոնց տրամադրվել են սննդի փաթեթներ և ճմեռային կոշիկներ: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում նաև դրամական օգնություն է հատկացվել 3 անապահով ընտանիքների

Բազմակողմանի աջակցություն է ցուցաբերվել հետևյալ հաստատություններին՝

1. ՀՕՖ երեխաների աջակցության կենտրոն
2. Երևանի N 1 տուն ինտերնատ
1. Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն
2. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնի մանկական բաժին
3. Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն
4. Երևանի Ն. Տիգրանյանի անվ. տեսողական խանգարումներ ունեցող երեխաների հ.14 հատուկ կրթահամալիր
5. Ձեյթունի խնամքի տուն
6. Հոսպիտալում բուժվող զինվորներին
7. Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն
8. Հաշմանդամ երեխաների «Տաթև» առողջակրթական ցերեկային կենտրոն
9. Արաբկիր վարչական շրջանի տարեց հաշմանդամներին

10. «Ձորակ» կենտրոն
11. «Խարբերդի հատուկ մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ
12. Հաշմանդամ երեխաների Ավանի ցերեկային կենտրոն
13. Երևանի խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն
14. Նորքի թիվ 17 հատուկ դպրոց
15. «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարան
16. Երևանի թիվ 117 մանկապարտեզ
17. Երևանի թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ
18. Նոր Նորքի հատուկ գիշերօթիկ դպրոց
19. Ս.Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն
20. «Առաքելություն Հայաստան» Մասիսի ցերեկային կենտրոն
21. Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոն

Սոցիալական ծրագրերի կարևոր մաս են կազմել տնայցերը: 76 այցելություն է իրականացվել բազմազավակ և անապահով ընտանիքների, հաշմանդամների, միայնակ ծերերի բնակարաններ: Օժանդակություն է ցուցաբերվել թեմին հոգևոր և նյութական աջակցության խնդրանքով դիմած հետևյալ տեղական հասարակական կազմակերպություններին, միություններին և ընկերություններին.

- «Ձեյթուն» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Լույսի Աստղ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Զոհված ազատամարտիկների մայրերի խորհուրդ» ՀԿ
- «Նոր Նորքի հաշմանդամների ընկերություն»
- «Էրեբունի համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքներ» ընկերություն
- «Մարիամ» հաշմանդամ երեխաների ծնողներ» ՀԿ
- «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամ
- «Տաթև» հաշմանդամ երեխաների ծնողներ» ՀԿ
- «Լուսաշող» հաշմանդամ երեխաների ծնողներ» ՀԿ
- «Հուսաստղ» հաշմանդամ երեխաների ծնողներ» ՀԿ
- «ԱԳՆԱ» հաշմանդամների բարեգոր-

ծական կազմակերպություն
- Արաբկիր համայնքի հաշմանդամների ընկերություն
- «Ալեքս» ՀԿ
- «Հավատ և սեր» ԲՀԿ
- «Աջափնյակի կանանց տարածաշրջանային ասոցիացիա» ՀԿ
- «Աստղաթև» ՀԿ
- «ՀԱԼԷՊ» հայրենասիրական, բարեսիրական հասարակական կազմակերպություն
- «ԵԿՄ» ՀԿ

2015թ. գրասենյակի կողմից իրականացված բարեգործական ծրագրերի արդյունքում օգնություն են ստացել (հագուստ, հիգիենայի պարագաներ, կոշիկ, դպրոցական պարագաներ, ծածկոցներ, պամպերսներ, խաչեր, սնունդ, խաղալիքներ, կոշիկ, հոգևոր գրականություն) բազմազավակ, միայնակ, հաշմանդամ, ծնողազուրկ և կարիքավոր 2114 շահառու:

Գրասենյակը համակարգում է նաև թեմի եկեղեցական համայնքների սոցիալական ծրագրերը: 2015թ. ԱՀԹ եկեղեցիների կողմից իրականացված սոցիալական ծառայությունների շրջանակներում ընդհանուր առմամբ իրականացվել է 279 սոցիալական ծրագիր, որոնց մասնակցել է 5742 մարդ:

Սոցիալական ծրագրերը հիմնականում ուղղված են եղել հետևյալ խոցելի խմբերին՝

- ընտանիքից օտարված երեխաներ
- բանտարկյալներ
- ծերանոցի բնակիչներ և ծերեր
- մանկատան սաներ, մանկատներ
- ծնողազուրկ երեխաներ
- Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ
- անապահով հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքներ
- հաշմանդամներ
- հայոց բանակում զոհվածների ընտանիքներ
- միայնակ թոշակառուներ, միայնակ մայրեր

- ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն»
- համայնքի չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներ
- հիվանդներ (վերականգնողական կենտրոն)
- ուսանողներ
- երիտասարդներ, խնդրահարույց դեռահասներ
- «Հավատ և Սեր» բարեգործական կազմակերպություն
- հոգեբուժարան
- կարիքավոր ընտանիքներ և թոշակառուներ
- աղանդավորներ
- զինհաշմանդամներ
- թիվ 2 օժանդակ դպրոց
- սիրիահայեր

Ծերանոց ու մանկատուն այցելելու, կարիքավորին օգնության հասնելու առաքելությունն իրենց վրա են վերցրել ոչ միայն Արարատյան Հայրապետական թեմի հոգևոր հայրերը, այլև եկեղեցու համայնքի ներկայացուցիչներն այն համոզումով, որ կարիքավորին օգնողը, ընկածին վեր բարձրացնողը, հուսահատվածին սատարողը Աստծո ձեռքն է երկրի վրա:

Քրիստոնեությունն այն մարդկանց կրոնն է, ովքեր այնքան ուժեղ են, որ կարողանում են մոռանալ սեփական կարիքները, սեփական անձն ու նեցուկ լինել կողքիններին:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ.

«ՄԵՆՔ ՄԵՐ ԶԻՆՎՈՐԻ ԿՈՂՔԻՆ ԵՆՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ս. Սարգսի տոնին նվիրված տոնախմբությունների ու միջոցառումների խանդավառությունը նոր, ավելի լուրջ ու ազգանվեր գաղափարի ծնունդ տվեց՝ աջակցել նրանց, ովքեր երբեմն կյանքի գնով ապահովում են մեր խաղաղությունը և ամուր պահում մեր երկրի սահմանները. եկեղեցին զինվորի՝ կողքին է, հավատացյալը զինվորի կողքին է, և որպեսզի այս փաստն իրական, շոշափելի ապացույց ունենար՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ և Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ՝ 2014թ. սկիզբ դրվեց **«Մենք մեր զինվորի կողքին ենք»** բարեգործական ծրագրին: Ս. Սարգիս զորավարի տոնի առիթով 2015թ. հունվարի 31-ին երկրորդ անգամ կազմակերպվեց բարեգործական ճաշկերույթ, որի ընթացքում կրկին հանգանակվեց 50.000.000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

Ծրագրի շրջանակներում դրամական օգնությունը բաշխվեց Արարատյան Հայրապետական թեմի տարածքում բնակվող՝

- 2014թ. զոհված և նախորդ տարվա ծրագրում չընդգրկված, ինչպես նաև 2015թ. հունիսի 1-ի դրությամբ հակառակորդի հետ շփման գծում զոհված զինծառայողների ընտանիքներին
- ՀՀ ՊՆ սոցիալական վարչությունում 1989- 2015թ. հունիսի 1-ի դրությամբ հաշվառված 1-ին խմբի զինհաշմանդամներին
- ՀՀ ՊՆ սոցիալական վարչությունում 2010-2015թթ. հունվարի 31-ի դրությամբ հաշվառված 2-րդ և 3-րդ խմբերի զինհաշմանդամներին

Գումարը բաշխվեց հետևյալ կերպ.

- Զոհված զինծառայողների ընտանիքներին - 350.000-ական (երեք հարյուր հիսուն հազա-

ական) ՀՀ դրամ

- Առաջին խմբի զինհաշմանդամներին - 160.000ական (մեկ հարյուր վաթսուն հազարական) ՀՀ դրամ
- Երկրորդ խմբի զինհաշմանդամներին - 130.000ական (մեկ հարյուր երեսուն հազարական) ՀՀ դրամ
- Երրորդ խմբի զինհաշմանդամներին - 100.000 ական(մեկ հարյուր հազարական) ՀՀ դրամ

Արարատյան Հայրապետական թեմի 2015թ. **«Մենք մեր զինվորի կողքին ենք»** բարեգործական ծրագրում ընդգրկված զոհված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև 1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի զինվորական հաշմանդամներին դրամական օգնություն ցուցաբերելու նպատակով թեմի եկեղեցիներում կազմակերպվեց բարեգործական 12 միջոցառում, որոնցից 2-ը՝ Արարատի մարզում, 9-ը՝ Երևանի տարբեր վարչական շրջաններում: Վերջին՝ 13-րդ միջոցառումը տեղի ունեցավ ԱՀԹ առաջնորդարանում: Գումարների բաշխումը կատարվեց ՊՆ զին-

ծառայողների սոցիալական պաշտպանության վարչության կողմից տրամադրված, նախապես ճշտված ցուցակի համաձայն՝ թեմի հոգևորականների, ծրագրի իրականացման պատասխանատուի, ՊՆ ներկայացուցիչների մասնակցությամբ: Ծրագրի հիմնական՝ բաշխման փուլին նախորդեց նախապատրաստական փուլը, որի ընթացքում կատարվեց ցուցակների ճշգրտում: ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության տրամադրած ցուցակներում ընդգրկված շահառուները խմբավորվեցին ըստ բնակության հասցեների, որից հետո ԱՀԹ քահանաներն իրենց հովվության տարածքում իրականացրեցին այցելություններ ծրագրում ընդգրկված ընտանիքներ՝ ճշտելով հասցեները, հեռախոսահամարները, քանի որ բազմաթիվ ընտանիքներ փոխել էին իրենց բնակության վայրը կամ բացակայում էին հանրապետությունից:2015թ. դեկտեմբերի 14-ի դրությամբ ընդհանուր թվով օգնություն է ստացել ծրագրի 361 շահառու, որոնց, ընդհանուր առմամաբ, բաշխվել է 50.000.000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ: 2015 թվականին **«Մենք մեր զինվորի կողքին ենք»** բարեգործական ծրագրի շրջանակներում կազմակերպվել են նաև մի շարք այլ միջոցառումներ՝ բարեգործական համերգներ, այցելություն վիրավոր զինվորներին, անցկացվել են մի շարք նախաձեռնություններ:

«ԲԵՐՔԻՑ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԶԻՆՎՈՐԻՆ»

2015թ. սեպտեմբերի 17-ին Արարատյան Հայրապետական թեմի Արարատի մարզի քահանաները **«Բերքից լավագույնը զինվորներին»** նախաձեռնությամբ այցելեցին ՀՀ ԶՈՒ Գեղարքունիքի ու Սյունիքի մարզի երկու զորամասեր և զինվորական հոսպիտալ: Արարատի մարզի գյուղացիները քահանաների նախաձեռնությամբ իրենց մրգի ու բանջարեղենի բերքից լավագույնը սիրով տրամադրեցին հայոց բանակի զինվորին: Ծրագրին իրենց աջակցությունը բերեցին նաև մարզի գյուղապետեր ու անհատ բարերարներ:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ՝ ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. 2015թ. նոյեմբերի 21-ին Առնո Բաբաջանյանի անվան ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի ունեցավ բարեգործական համերգ՝ նվիրված Ս. Երրորդություն եկեղեցու օծման 10-ամյակին: «Նվիրիր հույս» խորագրով բարեգործական համերգի հասույթը փոխանցվեց զինհաշմանդամ Վարդգես Փանանյանին, ով 1992-93թթ. Մարտակերտում թշնամու կողմից ստացված հրազենային վնասվածքի պատճառով առաջին կարգի հաշմանդամ է դարձել:

2. 2015թ. դեկտեմբերի 9-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ բարեգործական համերգ, որը նախաձեռնել էր ԱՀԹ Մխչյանի Ս. Հովհաննես եկեղեցու համայնքը: Համերգից ստացված հասույթը փոխանցվեց Մխչյան համայնքի երկու և Արաքսավան համայնքի մեկ զինհաշմանդամ ընտանիքներին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատյան Հայրապետական թեմի եկեղեցասեր Երիտասարդաց միություններ

Արարատյան Հայարապետական թեմում գործում է 20 եկեղեցասեր երիտասարդական միություն՝ 9-ը Արարատի մարզում, 11-ը Երևանում՝ շուրջ 600 անդամներով: Յուրաքանչյուր Երիտասարդաց միություն ունի ատենապետ և հոգևոր պատասխանատու:

2015թ. Երիտասարդաց միության անդամներն իրենց համայնքների հոգևոր հովիվների առաջնորդությամբ

- **Մասնակցել են հոգևոր դասընթացների և սերտողությունների**
  - Հոգևոր հանդիպումներ
  - «Եղիցի լույս» ամառային դպրոց
  - Աստվածաշնչի սերտողություն
- **Ազգային և եկեղեցական տոներին կազմակերպել են միջոցառումներ**
  - Ս. Ծնունդ
  - Ս. Սարգիս
  - Բուն Բարեկենդան
  - Միջինք
  - Ծաղկազարդ
  - Ս. Հարություն
  - Ավետում
  - Համբարձում
  - Հոգեգալուստ
  - Երեխաների պաշտպանության միջազգային օր
  - Պայծառակերպություն
  - Վերափոխում
  - Խաչվերաց
  - Թարգմանչաց տոն
  - Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից
  - Ուստիկանության օր
  - Բանակի օր

- **Իրականացրել են սոցիալական ծրագրեր**
  - «Օրրան» ՀԿ-ի հետ համագործակցություն
  - Ամանորի առթիվ զոհված ազատամարտիկների մայրերին նվերների հանձնում
  - Այց Առաքելություն Հայաստան ՀԿ ցերեկային կենտրոն
  - Հյուրասիրություն Մայրության օրվա կապակցությամբ
  - Մեկ օր Զինվորի կյանքում (երբ զինվորներն իրենց ամբողջ օրն անցկացնում են համայնքում)
  - Սիրո ճաշ
  - Այցելություն ծերանոցներ և մանկատներ
  - Այցելություն հիվանդանոցներ
  - Բարեգործական համերգներ
- **Կազմակերպել են ուխտագնացություններ**

- **Կազմակերպվել է Ինտելեկտուալ փառատոն**
  - Ձմեռային ինտելեկտուալ փառատոն
  - Գարնանային ինտելեկտուալ փառատոն
  - Ամառային ինտելեկտուալ փառատոն
  - Աշնանային ինտելեկտուալ փառատոն
  - Ինտելեկտուալ խաղ-մրցույթ թիվ 196 Ա. Նավասարդյանի անվան դպրոցում
- **Իրականացրել են քարոզչական ծրագրեր**
  - Քարոզթերթիկների բաժանում հասարակական վայրերում
  - Խաչերթ
  - Ամառային բակային ճամբար

- Խաչի քարոզ

- **Կազմակերպել են այցելություններ**
  - Զորամասեր
  - Հանրակրթական դպրոցներ
  - Թանգարաններ
- **Կազմակերպվել են գեղարվեստական միջոցառումներ**
- **Կազմակերպվել է ֆուտբոլի բաց առաջնության մրցարշար**

Արարատյան Հայրապետական թեմի եկեղեցասեր Երիտասարդաց միությունների համակարգման աշխատանքներն իրականացվում են Թեմական երիտասարդական խորհուրդի (ԹԵԽ) կողմից: ԹԵԽ-ի հոգևոր պատասխանատուն Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանն է, ատենապետը՝ Վահան Մարդյանը: Կառույցն իր մեջ է ընդգրկում ԱՀԹ-ի բոլոր՝Երևանի և Արարատի մարզի եկեղեցասեր երիտասարդական միությունները:

2015 թ. ԹԵԽ-ն իրականացրել է մի շարք հոգևոր ու մշակութային ծրագեր և միջոցառումներ.

1. Բարեկենդան (Ազգային ավանդույթներով կազմակերպված մեծ տոնախմբություն՝ «Կասկադ» համալիրում)

2. Միջինք (Ազգային ավանդույթներով կազմակերպված միջոցառում)

3. «Հարության Ավետիս» կանթեղներով երթ

4. Հաղթանակի աղոթք: (Հաղթանակի գոհաբանական աղոթք Շուշիի Ս. Ղազանչեցոց եկեղեցում)

5. Խաչի քարոզ: (ԱՀԹ երիտասարդաց միությունները Ս. Խաչի Երևման տոնին Երևանի կանգառներում իրականացրեցին խաչի քարոզ. խաչեր բաժանեցին երթուղային տաքսիների և ավտոբուսների վարորդներին՝ վերցնելով նրանցից աչքուլունքները և ուղևորներին ու անցորդներին նվիրելով խաչի պահպանիչ աղոթքներ)

6. Ս. Աստվածածնի տոներին կազմակերպեցին այցելություններ ծննդատներ և պոլիկլինիկաներ: (ԱՀԹ երիտասարդաց միությունները նորածինների համար մկրտության սրբիչներ, օրհնված խաչեր, նարոտներ և Հայ Եկեղեցու առաջին խորհրդի մասին պատմող թերթոններ բաժանեցին)

7. Համբարձում: (Ազգային ավանդույթներով կազմակերպված միջոցառում)

8. Վարդավառ: (Ազգային ավանդույթներով կազմակերպված միջոցառում)

9. Շախմատի փառատոն: (Ս. Աբգար թագավորի տոնի առթիվ թեմի երիտասարդաց միությունները կազմակերպեցին շախմատի ամենամյա փառատոն)

ԹԵԽ-ն իր ներկայացուցչությունն ունի Երևանի քաղաքապետին կից երիտասարդների հարցերով խորհրդի կազմում, որի շրջանակներում ակտիվ համագործակցում է կառույցում ընդգրկված կազմակերպությունների հետ, ինչպես նաև աջակցում է կառույցի ծրագրերի կազմակերպչական աշխատանքներին: